

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

(Դասախոսություններ)

ԵՐԵՎԱՆ

Դասը Պրինտ

2015

ՀՏԴ 81'282 (042.4) (07)

ԳՄԴ 81.2-67 y7

Մ 806

Հրատարակության է երաշխավորել Երևանի պետական համալսարանի
Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը

Գրախոսներ՝

դոցենտներ Վ. Կատվայան, Վ. Ավագյան, Ա. Սարհատյան

ՄԿՐՏՉՅԱՆ Գ.Գ.

Մ 806 Բարբառագիտության հիմունքներ (դասախոսություններ): Ուսումնամեթոդական ձեռնարկ /Գ. Մկրտչյան.-Եր.: Դաստ Պրինտ հրատ., 2015.- 69 էջ/:

Սույն ձեռնարկը ներառում է «Բարբառագիտության հիմունքներ» բուհական դասընթացի էական կողմերը և համապատասխանում է կրեդիտային համակարգով ուսումնառության թեմատիկ չափանիշներին: Ներկայացվում են հայերենի բարբառների դասակարգման չափանիշներն ու սկզբունքները, ինչպես նաև հայ բարբառագիտության մեջ կարևորություն ունեցող տարատեսակ հարցեր, ինչպիսիք են՝ հայերենի բարբառների ծագման ու քանակի հարցը, գիտական տառադարձությունը և այլն:

Նախատեսված է բակալավրի կրթական ծրագրով սովորող բանասեր ուսանողների, ինչպես նաև բարբառագիտությամբ և հայոց լեզվի պատմության հիմնահարցերով զբաղվող մասնագետների համար:

ՀՏԴ 81'282 (042.4) (07)

ԳՄԴ 81.2-67 y7

ISBN 978-9939-0-1538-5

© Մկրտչյան Գարիկ, 2015 թ.

© Դաստ Պրինտ հրատ., 2015 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք.....	5
-----------------	---

Գլուխ 1

ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏԱՃՅՈՒՂ, ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.....	7
---	---

1.1. Բարբառագիտությունը՝ որպես գիտաճյուղ.....	7
1.2. Հայերենի բարբառների քանակը և տեղաշարժերը.....	10
1.3. Հայերենի բարբառների հետազոտման մեթոդները.....	12
1.4. Հայ բարբառագիտության պատմություն.....	12

Գլուխ 2

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՏԵՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	21
2.1. Հայերենի բարբառների ծագումն ըստ տարբեր հետազոտողների.....	21
2.2. Հինգերորդ դարում հայ բարբառների գոյության հարցը.....	25
2.3. Բարբառներն ավելի հին են, քան գրաբարը (վարկած).....	28

Գլուխ 3

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.....	30
3. 1. Հայերենի բարբառների աշխարհագրական դասակարգումը.....	30
3.2. Հայերենի բարբառների ձևաբանական դասակարգումները.....	33
3.3. Հայերենի բարբառների հնչյունական դասակարգումը.....	38
3.4. Հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգումը.....	45

Գլուխ 4

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ, ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ, ԲԱՌԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ, ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ.....	55
4.1. Հայերենի բարբառների հնչյունական համակարգերի առանձնահատկությունները.....	55
4.2. Հայերենի բարբառների գիտական տառադարձության չափանիշները.....	59
4.3. Հայերենի բարբառների ձևաբանական, շարահյուսական համակարգերի ընդհանրությունները և տարբերությունները.....	60
4.4. Հայերենի բարբառների բառային համակարգերը.....	63
ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ.....	64
ՎԵՐՋԱԲԱՆ.....	68
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	69

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ըստ կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցի և դասընթացների տեղեկագրքի՝ «Բարբառագիտության հիմունքներ» դասընթացի համար նախատեսվում է 32 լսարանային ժամ, որից 24 ժամը հատկացվում է դասախոսություններին, իսկ 8 ժամը՝ սեմինար պարապմունքներին: Դասընթացը (2 կրեդիտ) կազմակերպվում է մեկ կիսամյակի ընթացքում (շաբաթական 2 ժամ):

«Բարբառագիտության հիմունքներ» դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել՝ ա) **հայերենի բարբառները ու դրանց դասակարգման սկզբունքները**, բ) **հայերենի բարբառների հնչունական, բառային, ձևաբանական և շարահյուսական համակարգերի առանձնահատկությունները**, գ) **հայերենի բարբառների ծագման տեսությունները**:

«Բարբառագիտության հիմունքներ» դասընթացի բովանդակությունը ներկայացվում է վեց առանձին թեմաներով: **Թեմա 1՝ Բարբառագիտությունը՝ որպես գիտաճյուղ:** **Թեմա 2՝ Բարբառների դասակարգման վերաբերյալ եղած տեսությունները:** **Թեմա 3՝ Բարբառների հնչունական համակարգերը:** **Թեմա 4՝ Բարբառների բառային համակարգերը:** **Թեմա 5՝ Բարբառների ձևաբանական համակարգերի տարբերությունները. սահմանական ներկան՝ որպես բարբառների ճյուղերի տարբերակման հիմք. ՈԻՄ, ԿԸ, ԵԼ ճյուղերի բարբառներ:** **Թեմա 6՝ Տարբեր ճյուղերի բարբառների ձևաբանական և շարահյուսական տարբերությունները:**

«Բարբառագիտության հիմունքներ» դասընթացը գնահատվում է ընթացիկ և եզրափակիչ քննություններով: Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով, թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր գնահատման արժեքով: Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր¹:

¹ Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք, *բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողների համար*, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ, Իջևան, 2014, էջ 145:

Դասընթացի շրջանակներում հայերենի բարբառների առանձնահատկությունների ուսուցումը, որը կատարվում է տեսական ու գործնական վերլուծություններով, ավելի է ամրապնդում ուսանողների գիտելիքները հայոց լեզվի կառուցվածքի ու պատմության վերաբերյալ: Դասախոսությունների սույն շարքում ներկայացվում են հայերենի բարբառների դասակարգման օրինաչափություններն ու սկզբունքները, նրանց առանձնահատկությունները, հարակից այլ հարցեր:

«Հայ բարբառագիտություն» կամ «Բարբառագիտության հիմունքներ» բուհական առարկան կարևոր տեղ է գրավել Երևանի պետական համալսարանում և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում դասավանդվող առարկաների շարքում: Բարբառների դասավանդումը բանասիրական ուղղվածություն ունեցող հոսքերում կարևոր է, քանի որ առանց հայերենի բարբառների ուսումնասիրման ու իմացության հնարավոր չէ ձևավորել ուսանողների լեզվաբանական ու մանկավարժական աշխարհայացքը:

«Բարբառագիտության հիմունքներ» դասընթացի նպատակները և խնդիրները ներկայացվում են հետևյալ ենթակետերում. ա) **ներկայացնել հայերենի բարբառների ծագումը**, բ) **ներկայացնել հայերենի բարբառների քանակը**, գ) **ներկայացնել հայերենի բարբառների դասակարգման չափանիշներն ու սկզբունքները**:

Դասընթացի շրջանակներում մանկավարժության մեջ կիրառվող մեթոդների միջոցով ի ցույց են դրվում տեսական բարբառագիտության՝ մինչ այժմ եղած գիտական ձեռքբերումներն ու տեսությունները՝ բացահայտելով բարբառագիտություն գիտակարգի առանձնահատկությունները:

Ներկայացվելիք դասախոսությունները կազմվել են **Հ. Աճառյանի** «Հայ բարբառագիտություն-Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» (1911 թ.), **Հ. Աճառյանի** «Հայոց լեզվի պատմություն» (II մաս, 1951 թ.), **Ա. Ղարիբյանի** «Հայբարբառագիտություն» (1953 թ.), **Ա. Գրիգորյանի** «Հայ բարբառագիտության դասընթաց» (1957 թ.), **Գ. Ջահուկյանի** «Հայ բարբառագիտության ներածություն» (1972 թ.) աշխատությունների հիման վրա, որոնցով կրթվել են բանասերների ու լեզվաբանների տասնյակ սերունդներ:

Գլուխ 1

ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏԱՃՅՈՒՂ, ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1.1. Բարբառագիտությունը՝ որպես գիտաճյուղ

Բարբառների մասին գիտությունը կոչվում է բարբառագիտություն: Այն՝ որպես գիտակարգ, ներառվում է տարածքային լեզվաբանության մեջ և ուսումնասիրում է բարբառների հնչյունական, քերականական, բառապաշարային և այլ առանձնահատկություններ՝ բարբառների ծագումը, զարգացումը, կրած փոփոխությունները և ներկա վիճակը:

Լեզվաբանական գիտակարգերի շարքում առանձին տեղ ունի բարբառագիտության գիտաճյուղը՝ իր դերով ու նշանակությամբ: Հայ բարբառների ուսումնասիրությունը մեկուկես հազարամյակի պատմություն ունի: Այդ երկարատև ժամանակամիջոցում հայ բարբառագիտությունն անցել է զարգացման մի քանի շրջան: Եթե մինչև 18-րդ դարն այն ակնարկային բնույթ է կրել, ապա 19-րդ դարից դրվել է գիտական ճշգրիտ ուղու վրա:

Հայերենի բարբառների բուն ուսումնասիրությունն սկզբնավորվել է 19-րդ դարում, իսկ նրանց գիտական ուսումնասիրությունը՝ 20-րդ դարում, և շարունակվում է մինչ օրս: 19-րդ դարի վերջերից հրապարակ եկան հայ առաջին բարբառագետների՝ Ա. Այտընյանի, Ք. Պատկանյանի, Լ. Մսերյանցի, լեհ Յան Հանուշի, Գ. Ախվերդյանի և այլոց ուսումնասիրությունները՝ հայերենի բարբառների վերաբերյալ: Նրանց կատարած ուսումնասիրությունները հայ բարբառագիտության զարգացման գործում արժեքավոր են և արտացոլում են հայերենի այս կամ այն բարբառի հնչյունական, քերականական կառուցվածքի նկարագիրը:

Բարբառը տվյալ լեզվի այնպիսի ճյուղավորում է, որն ունի յուրահատուկ հնչյունական, քերականական համակարգեր ու բառային հիմնական ֆոնդ: Բարբառագիտության մեջ մեծ կարևորություն ունեն **բարբառ**, **ենթաբարբառ**, **խոսվածք**, **ենթախոսվածք**, **բարբառախումբ**, **ենթախումբ**, **տարածք**, **տարածքային միավոր**, **բարբառային միավոր**, **խոսվածքային միավոր** լեզվաբանական եզրույթների կիրառություն-

ները և նրանց միջև եղած տարբերությունները: Լեզվաբանական աշխարհագրության մեջ ընդունված է ամեն մի տարածք համարել մի խոսվածք (**տարածքային միավոր, տարածքային տարբերակ, բարբառային միավոր**): Տարբեր խոսվածքների միջև կարող են լինել որոշ ընդհանրություններ, որոնց հիման վրա խոսվածքները միավորվում են բարբառների մեջ: **Բարբառը**, ի տարբերություն խոսվածքի, կարող է բավականին մեծ տարածք ընդգրկել, ընդ որում՝ այդ տարածքի առանձին մասերը կարող են իրարից կտրված լինել: Թեև բարբառները միմյանցից տարբերվում են լեզվի կառուցվածքի տարբեր օղակներով, այնուամենայնիվ տարբեր բարբառների միջև նույնպես կարող են նմանություններ լինել: Դրանց հիման վրա բարբառները խմբավորվում և կազմում են **բարբառախմբեր** կամ **բարբառային ճյուղեր**:

Գիր ունեցող ամեն մի ժողովուրդ ունի գրական ընդհանուր լեզու, բարբառներ ու խոսվածքներ: Խոսվածքների միավորիչ ու տարբերակիչ հատկանիշների գոյությամբ ձևավորվում են առանձին բարբառները, որոնք տեղական խոսվածքի բնույթ ունեն, սահմանափակվում են որևէ մարզով կամ մեկ-երկու գյուղերով: Ինչպես գիտենք, գրական լեզուն ձևավորվել է բարբառային հենքի վրա, կանոնակարգված է, երբեմն արհեստական տարրեր է պարունակում իր մեջ և մեծ մասամբ հաղորդակցային արժեք չունի, մինչդեռ բարբառները բնականորեն մշակված, պատմականորեն առաջացած, հաղորդակցային արժեք ունեցող սահմանափակ միջավայրի լեզվական ստեղծագործություններ են: Որքան բարբառների միջև եղած ընդհանրություններն ապացույց են տվյալ ժողովրդի զանազան հատվածների պատմական կապերի, այնքան էլ բարբառների տարբերություններն ապացույց են նրանց պատմական, մշակութային, աշխարհագրական երկատվածության ու ոչ միասնականության: Բարբառները լավագույն ապացույցն են այն բանի, թե ինչպես լեզվական մեկ ընդհանուր համակարգը կարող է ամփոփել իր մեջ մասնավոր և ինքնուրույն համակարգեր:

Հայ բարբառագիտությունը կազմում է հայերենագիտության մի մասը, և նրա ուսումնասիրությունը կարևոր է մի շարք առումներով: Հայ լեզվաբանությունը հիմնականում զբաղվել է գրական լեզուների ու նրանց առանձնահատկությունների մանրակրկիտ ուսումնասիրությամբ: Սակայն հնչյունաբանական օրենքների, ձևաբանական կարգերի ծագման, շարահյուսական իրողությունների առանձնահատկություններն առավել հիմնավոր ու ամբողջական են դառնում, երբ դրանք ստուգվում են բար-

բառների ներկայացրած փաստերով: Հայոց լեզվի ուսումնասիրությունն ամբողջական է դառնում բարբառների քննությամբ:

Հայերենի բարբառների ուսումնասիրության կարևորությունը նաև այն է, որ հնդեվրոպաբանության տարատեսակ հարցերի կարելի է պատասխանել բարբառներում գործող փաստերով: Հայերենի բարբառները բազմաթիվ տեղեկություններ են տալիս մեր ժողովրդի պատմության, էթնոսի և նրա ծագման, հնադարյան կեցության ու ապրելակերպի, վարչատարածքային բաժանվածության և այլնի մասին: Հայերենի բարբառների ուսումնասիրությունն արդիական է նրանով, որ ամբողջացնում է հայոց լեզվի պատմության ուսումնասիրությունը: Բարբառները համարվում են հայոց լեզվի պատմության ուսումնասիրության կարևորագույն և անսպառ աղբյուր:

Բարբառների ուսումնասիրությունը երևան է հանում այն աղբյուրները, որոնցից սնվել են գրական լեզուները: Բարբառների ժողովրդայնությունը թափանցում է գրական լեզու և դառնում նրա հիմքը: Առանց բարբառագիտության անհնարին է հասկանալ հայոց լեզվի պատմությունը: Բարբառներում գործող լեզվական փաստերով հստակեցվում է նաև գրական լեզվի պատմության պարբերացումը:

Բարբառագիտության ուսումնասիրությունն ունի նաև մանկավարժական նշանակություն: Բուհերում և դպրոցներում ուղղորդված ուսուցում կազմակերպելիս բարբառների դերն ու նշանակությունը պետք է մեծ կարևորություն ստանան, որպեսզի դպրոցների և գրականության միջոցով համաժողովրդական դարձած գրական լեզուն չխաթարի բարբառների բնականոն զարգացումը:

Պետք է կարևորել, որ հատկապես 20-րդ դարում հայագիտությունը լուրջ ձեռքբերումներ է գրանցել բարբառագիտության ասպարեզում: Առանձին ուսումնասիրության են ենթարկվել հայերենի բարբառների մեծ մասը, կազմվել են բարբառային բառարաններ, ինչպես նաև դաշտային աշխատանքների շնորհիվ գրառվել ու հավաքագրվել են տասնյակ բարբառային միավորներ ու խոսվածքներ «Հայերենի բարբառագիտական ատլասի» (ՀԲԱ) ծրագրով:

Այսքանով հանդերձ՝ հայերենի բարբառների ուսումնասիրությունն սպառված չէ: Տակավին կան ուսումնասիրության կարոտ առանձին բնակավայրեր ու տարածքներ, ինչպես նաև հրատապ խնդիր է Հայաստանի Հանրապետության բարբառային ատլասի կազմումը:

1.2. Հայերենի բարբառների քանակը և տեղաշարժերը

Հայերենի բարբառների՝ Գ. Ջահուկյանի կատարած վերջին վիճակագրական դասակարգումը ցույց է տալիս, որ գիտությանը հայտնի են շուրջ քառասունչորս հայերեն բարբառներ: Այդ բարբառները մեր լեզվի նյութական, մշակութային, հոգևոր հարստության կարևորագույն բաղադրատարրերն են և արտացոլում են հայերենի հարստությունն ու ճկունությունը:

Հ. Աճառյանը «Հայ բարբառագիտություն.-Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» (1911 թ.) աշխատության մեջ ընդունել է 31 բարբառ, ապա «Հայոց լեզվի պատմություն» աշխատության երկրորդ հատորում հայերենի բարբառների թիվը հասցրել է 36-ի: Հ. Աճառյանն ընդունել է նաև մի շարք ենթաբարբառներ ու խոսվածքներ, որոնք ուշ շրջանի ուսումնասիրողները համարել են անկախ բարբառներ:

Ա. Ղարիբյանը տարբեր ժամանակներում իրարամերժ թվեր է հրապարակել հայերենի բարբառների քանակի վերաբերյալ: Այս հարցում նրա վերջին խոսքն արտահայտվել է «Հայ բարբառների ծագման հարցի շուրջը» հոդվածում²: Նա առանձնացրել է շուրջ վաթսուն բարբառ՝ հիմք ընդունելով հայերենի բարբառների ճյուղերն ու ճյուղավորումները:

Առանձին բարբառագիտական մենագրությունների հեղինակներ (Վ. Պետոյան, «Մասունի բարբառը» (Ե., 1954թ.), Ս. Անթոսյան, «Կեսարիայի բարբառը» (Ե., 1961թ.), Մ. Մուրադյան, «Շատախի բարբառը» (Ե., 1962թ.), Ն. Վարդապետյան, «Սյունիքի բարբառը» (ատենախոսություն, ձեռագիր, սեղմագիրը՝ «Сюникский диалект», (Ե., 1962թ.), Հ. Մուրադյան, «Կաթավաբերդի բարբառը» (Ե., 1967թ.) և այլն) բարբառ են կոչում նաև այնպիսի միավորներ, որոնք Հ. Աճառյանը և Ա. Ղարիբյանը դիտում են որպես ենթաբարբառներ կամ նույնիսկ խոսվածքներ:

Այսօր հայերենի բարբառներն աշխարհագրորեն դասավորված չեն այնպես, ինչպես անցյալում է եղել: Սկսած 20-րդ դարի սկզբից ի վեր՝ պատմական տարբեր գործընթացների պատճառով խախտվել են հայերենի բարբառների տարածական հիմքերը, աշխարհագրական տարբեր գոտիներում հայտնվել են այլ շրջաններում ձևավորված ու զարգացած բարբառներ: Օրինակ՝ 20-րդ դարի սկզբից Հայաստանի

² Տե՛ս Ա. Ղարիբյան, *Հայ բարբառների ծագման հարցի շուրջը*, Պատմաբանասիրական հանդես, Ե., 1958, հ. 3, էջ 240-266:

յուրաքանչյուր շրջանում սկսում են գոյակցել զանազան բարբառների կրողներ, որոնք ապրում էին կա՛մ առանձին գյուղերում, կա՛մ մեկտեղված մի գյուղի մեջ: Այսպես, Արմավիրի մարզում (նախկինում՝ Վաղարշապատի շրջան) 11 գյուղ համարվել են **Արարատյան** բարբառի ներկայացուցիչներ, 7 գյուղ՝ **Ուրմիայի** բարբառի, 2 գյուղ՝ **Մշո** բարբառի, մեկ գյուղ՝ խառը բարբառներով՝ **Արարատյան, Ուրմիայի** ու **Հավարիկի** և այլն:

Բարբառների այսպիսի դասավորության պատճառը հայերի՝ վերջին դարերի արտագաղթն է պատմական Հայաստանից: Դարեր առաջ այդ բարբառներից յուրաքանչյուրը կիրառվում էր պատմական Հայաստանի տարածքների զանազան հատվածներում: Արարատյան դաշտում եղել է միայն **Արարատյան** կամ **Երևանի** բարբառը, Սյունիքում՝ **Սյունյաց** բարբառը, Տայոց աշխարհում՝ **Տայոց** բարբառը, Կարինում և Սպերում՝ **Կարնո** բարբառը, Տարնում՝ **Մշո** բարբառը, Վանում՝ **Վանի** բարբառը, Ուրմիայում՝ **Ուրմիայի** բարբառը, Հին Ջուղայում՝ **Ջուղայի** բարբառը և այլն: Այս ամենը ցույց է տալիս, որ հայ բարբառները խառնվել են իրար պատմականորեն: Այս հանգամանքը բավականաչափ նպաստել է նրանց վերափոխմանը և վերացմանը: Այսօր միայն Երևանում կարելի է գտնել հայերենի համարյա բոլոր բարբառների կրողներին:

Որքան էլ հայերենի բարբառների միահատկանիշ և բազմահատկանիշ դասակարգումները որոշակիորեն հստակեցնում են հայերենի բարբառների քանակը, այդուհանդերձ այսօր արդեն դժվար է հիմնավորապես հաստատել այդ թիվը, քանի որ պատմական բազմաթիվ գործընթացների, տեղաշարժերի պատճառով ոչ միայն խախտվել են հայերենի բարբառների տարածքային բուն հիմքերը, այլև նրանցից շատերն ուղղակիորեն վերացել են, ինչպես՝ **Ագուլիսի, Վանի, Սեբաստիայի, Հավարիկի, Տիգրանակերտի, Խարբերդ-Երզնկայի, Առդեալի բարբառները** և այլն:

Հայերենի բարբառներից շատերն այսօր արդեն չկան, վերացել են: Հայերենի բարբառների քանակի նվազումը բացառապես հիմնավորվում է կատարված տեղաշարժերով ու Հայոց մեծ եղեռնի ընթացքում մի շարք բարբառների ոչնչացմամբ: Այսօր արդեն դժվար է ստույգ նշել հայերենի բարբառների քանակը, քանի որ հայերենի բարբառների վիճակագրական-բազմահատկանիշ դասակարգումից հետո վիճակագրական նոր ուսումնասիրություններ չկան այդ ասպարեզում: Եթե Գ. Ջահուկյանն իր վի-

ճակագրությունը կատարելիս հիմք է ընդունել 20-րդ դարի սկզբում հայերենի բարբառների ունեցած վիճակը, ապա այսօր անհրաժեշտ է առաջնորդվել 21-րդ դարում հայերենի բարբառների ներկա վիճակով ու գոյությամբ:

1.3. Հայերենի բարբառների հետազոտման մեթոդները

Ըստ ժամանակի ընդգրկման՝ տարբերակվում են հայերենի բարբառների ուսումնասիրության համաժամանակյա և տարաժամանակյա սկզբունքները: Հայերենի բարբառների ուսումնասիրության տարաժամանակյա հայեցակետը նպատակ է հետապնդում ներկայացնել հայերենի բարբառների ծագումը, պատմական զարգացումը և կրած փոփոխությունները, իսկ համաժամանակյա մոտեցումը ներկայացնում է հայերենի բարբառների ներկա վիճակը: Համաժամանակյա (կայական) և տարաժամանակյա (պատմական) մեթոդներն անհրաժեշտ ու կարևոր են հայերենի բարբառներն ուսումնասիրելիս. դրանք փոխլրացնում են իրար, և բարբառների բուն առանձնահատկությունները շատ հաճախ ներկայացվում են երկու մեթոդների համատեղ կիրառությամբ:

Բարբառների ուսումնասիրության մեջ մեծ կարևորություն է ստանում փորձառական մեթոդի օգտագործումը: Այն հատկապես կիրառվում է բարբառների հնչունական համակարգերն ուսումնասիրելիս: Այս մեթոդը, բարբառների հնչունական համակարգերի հետազոտման հենքի վրա ձևավորվելով, հիմք է հանդիսացել մեկ այլ լեզվաբանական ուղղության՝ փորձառական հնչունաբանության ձևավորմանը: 19-րդ դարավերջին Փարիզում ապրելիս Հ. Աճառյանը փորձառական մեթոդով ուսումնասիրել է հայերենի բարբառների հնչունական երևույթները՝ դառնալով այդ ուղղության հայաստանյան հիմնադիրը:

1.4. Հայ բարբառագիտության պատմություն

Հայ բարբառագիտության ձեռքբերումները պայմանավորված են վաստակաշատ գիտնականների ծավալած գործունեությամբ, հետևաբար հայերենի բարբառների հիմնախնդիրների և դասակարգումների լուսաբանումը հաճախ վերածվում է

նույնանուն գիտակարգի պատմության լուսաբանման ու ներկայացման: Հայ բարբառագիտության պատմությունը ներկայացնելիս կարևորվում է 19-րդ դարում այդ գիտակարգի հիմնադրումը, որում մեծ է ոչ միայն հայաստանաբնակ, այլև արտասահմանյան հայագետների ներդրումը:

Հայերենի բարբառների մասին առաջին հիշատակությունները տալիս են մեր պատմիչները՝ Մ. Խորենացին, Կորյունը, և մեկնիչ-քերականները՝ Թրակացու քերականության հայ թարգմանիչները, Դավիթ մեկնիչը, Անանուն մեկնիչը, Մովսես Քերթողը և Ստեփանոս Սյունեցին: Հետագա դարերում՝ հատկապես ուշ միջնադարում, հայերենի բարբառների մասին ակնարկել է հոլանդացի հայագետ Հ. Շրոդերը «Thesaurus linguae armeniacae» («Գանձ Արամեան լեզուի») աշխատության մեջ (Ամստերդամ, 1711թ.): Շրոդերին հայտի են եղել **Ագուլխի, Ջուղայի, Թբիլիսիի, Ղարաբաղի, Փոքր Հայքի և Վանի** բարբառները: Հայերենի բարբառների մասին տեղեկություն տվող մյուս աշխատությունը Շահան Ջրպետի՝ ֆրանսերեն լեզվով գրած հայերեն քերականությունն է (Grammaire de la langue armenienne, Paris, 1823): Այս աշխատության մի մասը նվիրված է հայերենի բարբառներին:

Հայերենի բարբառներին նվիրված աշխատություն է հեղինակել նաև Գևորգ Ախվերդյանը: Խոսքը «Սայեաթ-Նովայ» ուսումնասիրության մասին է: Այս աշխատությամբ սկսվում է հայերենի բարբառների ոչ գիտական ուսումնասիրությունը, որը առաջին կարևորություն ունեցող գիտական ուսումնասիրությունն է հայ բարբառագիտության մեջ: Գրքի բովանդակությունը ներառում է Սայեաթ-Նովայի բանաստեղծությունները, և աշխատության նախաբանում Գ. Ախվերդյանը տալիս է Թբիլիսիի բարբառի համառոտ նկարագրությունը: Նկարագրվել են հատկապես Թիֆլիսի բարբառի ձևաբանական համակարգերը: Գ. Ախվերդյանը թիֆլիսցի էր, լավ գիտեր իր մայրենի բարբառը, ուստի նրա տեղեկությունները Թիֆլիսի բարբառի մասին համարվում են անսխալական և ճշգրիտ: Գ. Ախվերդյանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Թիֆլիսի բարբառը՝ 19-րդ դարում եղած փաստերով, ենթարկվել է Երևանի բարբառի խիստ ազդեցությանը, որովհետև Գ. Ախվերդյանը Թիֆլիսի բարբառի ձևերին զուգահեռ հիշատակում է նաև այնպիսի ձևեր, որոնք բնորոշ են Երևանի բարբառին:

Հայ բարբառագիտության հիմնախնդիրներով զբաղվել է նաև Ա. Այտընյանը: «Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի» (Վիեննա, 1866 թ.) աշխատության

«Նախաշաւիդ»-ում Ա. Այտընյանը բավական ընդարձակ խոսում է հայերենի բարբառների մասին և տալիս է նրանց առաջին միահատկանիշ դասակարգումը: Ա. Այտընյանի տված տեղեկություններից երևում է, որ նա ծանոթ է եղել մեր մի շարք բարբառներին, տիրապետել է այդ բարբառների առանձնահատկություններին՝ փորձելով կատարել աշխարհագրական դասակարգում:

Բարբառագիտության հիմնախնդիրներին անդրադարձել է նաև Ք. Պատկանյանը: Նա հրատարակել է ուսումնասիրություն Ագուլիսի բարբառի մասին գերմաներեն լեզվով (1866 թ.), ապա «Исследование о диалектах армянского языка» աշխատության մեջ ներկայացրել է հայերենի ութ բարբառների նկարագիրը: Այն հիմնավորվում է մի շարք գրավոր աշխատություններով և իր անձնական տեղեկություններով: Ք. Պատկանյանը 1875 թ. հրատարակում է «Материалы для изучения армянских наречий» երկպրակ աշխատությունը, որոնցից մեկը պարունակում էր Նոր Նախիջևանի, մյուսը՝ Մշո բարբառով տեքստեր:

1867 թ. հայազետ Հ. Պետերմանը հրատարակել է Թբիլիսիի բարբառի քննությունը, 1883 թ. Ս. Սարգսյանցը լույս է ընծայում Ագուլիսի բարբառի մանրամասն ուսումնասիրությունը: Այս աշխատությունը մինչև հիմա չի կորցրել իր գիտական արժեքը և օգտակար է բարբառագիտական ուսումնասիրությունների համար: 1886 թ. լեհ հայազետ Հանուշն ուսումնասիրում է լեհահայոց բարբառը և հրատարակում իր ուսումնասիրությունը՝ «Sur la langue des Armeniens polonaise, 1. Mots recucillis a` Kuti, Crocovie», ապա գրում է «Beitrage zur armenischen Dialectologie» գիրքը: Այս աշխատությունները լավագույն վկայություններն են լեհահայոց բարբառի մասին, թեև ուսումնասիրությունն անավարտ է: 1887 թ. հայազետ Թոմսոնը հրատարակում է ուսումնասիրություն Ախալցխայի, իսկ 1890 թ.՝ Թիֆլիսի բարբառների մասին: Այդ երկու աշխատությունները հնդեվրոպական լեզվաբանական դպրոցի սկզբունքներով են կատարվել: Հայ բարբառագիտության մեջ մի շարք աշխատանքներ ունի Մելիք Ա. Դավիթ Բեկ հեղինակը: 1896 թ. նա լույս է ընծայել Մարաշի բարբառի համառոտ քննությունը, իսկ 1900-ական թթ.՝ Արաբկիրի բարբառի քննությունը:

1897 և 1901 թթ. լույս են տեսել Լ. Մսերյանցի՝ Մշո բարբառին նվիրված արժեքավոր ու մնայուն ուսումնասիրությունները: 1899 թ. հրատարակվել է Հ. Գազանձեանի «Եւրոկիոյ հայոց գաւառաբարբառը» փոքրիկ աշխատությունը:

1898 թ. հայ բարբառագիտության ասպարեզ է մտնում Հ. Աճառյանը: Նրա առաջին աշխատությունները լույս են տեսնում 1898-1899թթ. և 1901 թ. ու նվիրված էին **Ասլանբեկի, Սուչավայի ու Ղարաբաղի** բարբառների քննությանը: Այդ աշխատությունները համեմատաբար փոքր ծավալ ունեն, և դրանցից մեկը՝ «Սուչավայի բարբառի քննությունը», մնացել է կիսատ և լրացվել է 1953 թ.: Հ. Աճառյանի գրչին է պատկանում գերմաներենով գրված «Lautlehre des Van Dilekts» աշխատությունը: Այն ամփոփում է Վանի բարբառի հնչյունական համակարգի մանրակրկիտ քննությունը: 1909 թ. Հ. Աճառյանը ֆրանսերենով հրատարակում է հայ բարբառագիտության մեջ դարագլուխ կազմող իր «Classification des dialects armeniens» աշխատությունը: Այս աշխատությունը 1911 թ. լույս է տեսնում հայերենով և ունի «Հայ բարբառագիտություն-Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» խորագիրը: Այն զետեղված է «Էմինյան ազգագրական ժողովածու»-ի Ը հատորում:

Հայ բարբառագիտության զարգացման համար շրջադարձային է 20-րդ դարը: Այս հարցում անուրանալի է հայ մեծանուն լեզվաբան Հ. Աճառյանի ծավալած գիտական գործունեությունը: Հ. Աճառյանի «Հայ բարբառագիտություն-Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» արժեքավոր աշխատությամբ հիմք է դրվում հայերենի բարբառների գիտական ուսումնասիրությունը: Նախաաճառյանական բարբառագիտությունը որքան էլ ունի ձեռքբերումներ, սակայն արծարծված հիմնախնդիրներով ու ուսումնասիրության ծավալով չունի այն ընդգրկումը, ինչը տեսնում ենք Հ. Աճառյանի կատարած ուսումնասիրություններում: Աճառյան բարբառագետ-գիտնականի վաստակը մեծ է ոչ միայն շուրջ չորս տասնյակ բարբառների հավաքագրման, դասդասման գիտական ուսումնասիրությամբ ու հայերենի բարբառների միահատկանիշ դասակարգմամբ, այլև բարբառագիտական դպրոցի ստեղծմամբ: Հ. Աճառյանի ստեղծած դպրոցն իր հետևորդներն է ունեցել ողջ 20-րդ դարում և ունի այսօր. նրա լեզվաբանական ժառանգությունը հիմք է դարձել տարաբնույթ գիտական ուսումնասիրությունների համար:

Հ. Աճառյանը հեղինակել է հայերենի բարբառներին նվիրված բազմաթիվ մենագրություններ: Այդ ժառանգության մեջ կարևոր տեղ են գրավում արևմտյան բարբառները, որոնց վերջնական անհետացումից և կորստից փրկել, գրավոր տեսքով մեզ է ավանդել մեծ հայագետը: Բարբառագետները միշտ ասել են, որ Հ. Աճառյանի հա-

վաքչական ու գիտական գործը հավասարազոր է մի ողջ ինստիտուտի կատարած գործունեության: Հետևապես, Հ. Աճառյանն իրավամբ հայ գիտական բարբառագիտության հիմնադիրն է, և հայերենի բարբառների գիտական ուսումնասիրությունն սկսվում է Հ. Աճառյանով:

Իրեն հատուկ բարեխղճությամբ և ջանասիրությամբ Հ. Աճառյանը հավաքել է նմուշներ բոլոր բարբառներից, տարատեսակ վերլուծությունների ենթարկել դրանք և իր ստեղծած տառադարձության համակարգով զետեղել «Հայ բարբառագիտություն.- Ուրվագիծ և դասավարություն հայ բարբառների» աշխատության մեջ: Հ. Աճառյանն այդ աշխատության մեջ մեծ հմտությամբ տվել է 31 բարբառների համապարփակ նկարագրությունը: Նա հրապարակել է մի շարք կարևոր աշխատություններ՝ նվիրված հայերենի բարբառներին, ինչպիսիք են՝ «Քննություն Նոր Նախիջևանի բարբառի» (Ե., 1925 թ.), «Քննություն Մարաղայի բարբառի» (Ե., 1926 թ.), «Քննություն Ագուլիսի բարբառի» (Ե., 1935 թ.), «Քննություն Պոլսի բարբառի» (Ե., 1941 թ.), «Քննություն Նոր Ջուղայի բարբառի» (Ե., 1939թ.), «Քննություն Համշենի բարբառի» (Ե., 1947թ.), «Քննություն Վանի բարբառի» (Ե., 1953թ.), «Քննություն Առտիալի բարբառի» (Ե., 1953թ.) և այլն:

Հ. Աճառյանը հայերենի բարբառների քննությունը կատարել է հետևյալ սկզբունքներով՝ ա) **հնչյունական համակարգի ընդհանուր նկարագրություն**, բ) **ձևաբանություն**, գ) **լեզվական նմուշներ**, դ) **գրաբարից բարբառ բառացանկ**:

Հ. Աճառյանը հայերենի բարբառներում գործող շարահյուսական իրողություններին մեծ տեղ չի տալիս, քանի որ հայերենի բարբառներում դրանք տարբերակիչ մեծ դրսևորումներ չունեն:

Հայերենի բարբառների տարաբնույթ խնդիրներին Հ. Աճառյանն անդրադարձել է նաև «Հայոց լեզվի պատմություն» (1951 թ.) աշխատության երկրորդ հատորում, որտեղ առաջ է քաշում հայերենի բարբառների ծագման վերաբերյալ իր տեսակետները, ինչպես նաև ներկայացնում է 36 բարբառների համառոտ նկարագիրը՝ ըստ 1911 թվականին լույս տեսած աշխատության մեջ կիրառած սկզբունքների:

Այսպիսով՝ Հ. Աճառյանը ստեղծում է բարբառագիտական դպրոց: Ն. Մառք, հետևելով այդ բարբառագիտական դպրոցի սկզբունքներին ու մեթոդներին, հրատարակում է «Материалы по хамшенскому наречию армянского языка» փոքրիկ հոդվածը:

1922 թ. «Բանբեր Հայաստանի Գիտական ինստիտուտի» ժողովածուում Գ. Պողոսյանը հրատարակում է Արեշ-Հավարիկի բարբառի համառոտ ուսումնասիրությունը: Այդ աշխատությունը հետաքրքրական նորություններ է տալիս հայ բարբառագիտությանը. մինչ այդ Արեշ-Հավարիկի բարբառը մանրամասն ուսումնասիրված չէր: 1912 թ. ֆրանսերենով հրատարակվում է Մ. Մաքսուդյանցի «Ակնա հայ բարբառը» ուսումնասիրությունը:

Հայ բարբառագիտության զարգացման գործում նույնքան մեծ դեր ունի Ա. Ղարիբյանը: Նա կատարել է տեսական հարցերի տարատեսակ քննություններ իր աշխատություններում, ինչպիսիք են՝ բարբառների ծագումը, հայերենի բարբառների աշխարհագրական, ձևաբանական, հնչյունական դասակարգումները: 1939 թ. լույս է տեսնում նրա «Հայ բարբառների մի նոր ճյուղ» խորագրով աշխատությունը: Այստեղ հեղինակը տալիս է հինգ նորահայտ բարբառների նկարագրությունը: Առանձին ճյուղերում ընդգրկվող բարբառների առանձնահատկությունների բացահայտմանն է նվիրված նրա «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ» (1958 թ.) աշխատությունը: 1941 թ. լույս է տեսնում նրա «Համառոտություն հայ բարբառագիտության» աշխատությունը, իսկ 1953 թ.՝ «Հայ բարբառագիտություն» բուհական դասագիրքը, որը մինչ օրս չի կորցրել իր արդիականությունը: Այս գրքի մեջ հեղինակն ամփոփել է իր հիմնական տեսակետները հայերենի բարբառների ծագման, դասակարգման վերաբերյալ, օգտվելով Հ. Աճառյանի աշխատություններից՝ ներկայացրել է իր ընդունած շուրջ 50-60 բարբառների համառոտ պատկերը:

Հայ բարբառագիտության մեջ որոշակի ներդրում է կատարել նաև բարբառագետ Ահարոն Գրիգորյանը: 1957 թ. լույս է տեսել նրա «Հայ բարբառագիտության դասընթաց» բուհական դասագիրքը, որում հեղինակը ներկայացրել է հայերենի բարբառները ու մինչ այդ եղած դասակարգումները:

20-րդ դարում և այսօր հայերենի բարբառների ուսումնասիրությունն ընթանում է անկախ բարբառների առանձնահատկությունների բացահայտման ճանապարհով: Փորձառական և ճանաչողական ճշգրիտ չափանիշներով ուսումնասիրության են ենթարկվել ու ենթարկվում ոչ միայն առանձին բարբառներ, այլև ենթաբարբառներ ու խոսվածքներ: Այդ ընթացքում լույս են տեսնում ոչ միայն բարբառներին ու բարբառախմբերին, այլև ենթաբարբառներին, խոսվածքներին նվիրված ուսումնասիրություն-

ներ: **Էդ. Աղայանը**, կատարելով Մեղրու բարբառի ամբողջական քննությունը, «Մեղրու բարբառը» (1954 թ.) մենագրության մեջ հնչյունափոխական որոշ յուրահատկություններ է նշում թե՛ Մեղրու, թե՛ արևելահայ բարբառների վերաբերյալ: Նա ներկայացնում է բարբառային բառերի հատուկ ցանկ, որոնք չեն արտահայտվել գրաբարի բառապաշարում: Այսպիսի ընդգրկումով է գրված նաև **Ալեքսանդր Մարգարյանի** «Գորիսի բարբառը» (1975 թ.) մենագրությունը, որն աչքի է ընկնում տեսական ու գործնական խնդիրների առաջադրումով: Նույն կերպ ամբողջական պետք է համարել **Արմենակ Պողոսյանի** «Հաղրութի բարբառը» (1965 թ.), որում հեղինակը մանրամասն ներկայացնում է անգամ բարբառագիտության բաժինները: Արժեքավոր են նաև **Մանվել Ասատրյանի** «Ուրմիայի բարբառը» (1968թ.) և «Լոռու խոսվածքը» (1968թ.) մենագրությունները:

Այսօր աշխատանքներ են տարվում և համաժամանակյա մոտեցմամբ ուսումնասիրության են ենթարկվում ՀՀ-ի առանձին մարզերի ու տարածաշրջանների բարբառները և լեզվական առանձնահատկությունները: Այս հարցում մեծածավալ գործունեություն է ծավալում ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժինը: Հայ բարբառագիտության զարգացման գործում գիտական կարևոր նշանակություն ունեն նաև հետևյալ ուսումնասիրությունները՝ **Հ. Մկրտչյան**, «Կարնո բարբառը» (1952թ.), **Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյան**, «Սշո բարբառը» (1958 թ.), **Ռ. Բաղրամյան**, «Դերսիմի բարբառային քարտեզը» (1960 թ.), **Հ. Մուրադյան**, «Կարճևանի բարբառը» (1960 թ.), **Կ. Դավթյան**, «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» (1966 թ.), **Ռ. Բաղրամյան**, «Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները» (1972 թ.), **Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյան**, «Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում», (1973 թ.), **Ա. Հանեյան**, «Տիգրանակերտի բարբառը», (1978 թ.), **Դ. Կոստանդյան**, «Երզնկայի բարբառը» (1979 թ.), **Ք. Մաղաթյան**, «Ալաշկերտի խոսվածքը» (1985 թ.), **Ժ. Միքայելյան**, «Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները» (2009 թ.), **Ջ. Բառնասյան**, «Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում» (2009 թ.), **Մ. Աղաբեկյան**, «Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն» (Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, 2010 թ.), **Հ. Խաչատրյան**, «Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում» (2009 թ.), **Հ. Մեսրոպյան**, «Ածականական հոմանիշները

հայերենի բարբառներում» (2010 թ.), «**Հայերենի բարբառագիտական ատլաս**» (հրատարակված երեք պրակները՝ 1982 թ., 1985 թ., 2010թ.), **Գ. Գևորգյան**, «Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի տարածագործառական բնութագիրը» (2013 թ.), **Վ. Կատվայան**, «Հայ բարբառագիտության հարցեր» (2014 թ.) և այլն:

1972 թ. ակադեմիկոս **Գ. Ջահուկյանը** հրատարակում է «Հայ բարբառագիտության ներածություն» ուսումնասիրությունը: Հայերենի բարբառների բազմահատկանիշ կամ վիճակագրական դասակարգմամբ բարբառագիտությունը ներկայանում է որպես նոր գիտակարգ (դիսցիպլին): Գ. Ջահուկյանը, ձեռնարկելով հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգումն ըստ նրանց հնչյունական, քերականական և բառային հիմնական առանձնահատկությունների, նպատակ է դնում հայ բարբառների նկատմամբ պարզապես կիրառելու լեզվաբանական աշխարհագրության սկզբունքներն ու մեթոդները, այսինքն՝ զուգաբանությունների՝ իզոգլոսների մեթոդը: Սակայն աշխատանքի ընթացքում պարզվում է, որ լեզվաբանական աշխարհագրության սկզբունքների նույնական կիրառումը հայերենի բարբառների նկատմամբ հարուցում է որոշակի դժվարություններ՝ **ա)** բնակչության պարբերական տեղաշարժերը խախտել են բառային հատկանիշների տեղաբաշխման բնական սահմանները, **բ)** եղած փաստերը չեն տալիս բառային միավորների փոխհարաբերությունը որոշելու հստակ և ճշգրիտ չափանիշներ:

Բարբառագիտությունը կամ բարբառագրությունը բառային կենտրոնները և սահմանները որոշում են ըստ քարտեզի վրա տարված զուգաբանական (իզոգլոսային) գծերի խտության և նոսրության աստիճանի: Այսպես չի ապահովվում բառային միավորների առանձնացման օբյեկտիվությունն այնպիսի միավորների ճշգրիտ տարբերակման, առանձնացման ու դասակարգման համար, ինչպիսիք են՝ **բարբառների խմբերը, ենթախմբերը, ենթաբարբառները, խոսվածքները**: Ուստի ուսումնասիրության առարկայի նյութը և բարբառների փոխհարաբերության պատկերն ավելի որոշակիորեն և ավելի տարբերակված կերպով արտացոլելու նպատակով Գ. Ջահուկյանն առանձնացնում է բարբառագիտական մի նոր սկզբունք, որը նա պայմանականորեն կոչում է **վիճակագրական բարբառագիտություն**:

Գ. Ջահուկյանի կատարած ուսումնասիրությունից հետո հայերենի բարբառների վերաբերյալ նմանօրինակ դասակարգողական, արժեքավոր, ամբողջական հետազոտություն տակավին չկա:

Գլուխ 2
ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ
ԾԱԳՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենի բարբառների ծագման խնդրի շուրջ գոյություն ունի հայագիտական երկու մոտեցում: Կարևորություն է ստանում հայերենի բարբառների՝ հին հայերենի հետ ունեցած հարաբերակցությունը: Հարցադրումը մեկն է՝ գրաբարն է նախորդե՞լ բարբառներին, թե՞ բարբառներն են նախորդել գրաբարին: Խնդրի վերաբերյալ տեսություններից մեկը ներկայացնում են Հ. Աճառյանը և նրա հետևորդները: Նրանց կարծիքով՝ գրաբարը հայերենի հնագույն վիճակն է, իսկ հայերենի բարբառները ձևավորվել են գրաբարի հիմքի վրա: Մյուս տեսության ներկայացուցիչներն են Ա. Ղարիբյանը և նրա հետևորդները: Ըստ նրանց՝ հայերենի բարբառները նախորդել են գրաբարին, իսկ գրաբարն այդ բարբառներից մեկի հիմքի վրա ձևավորված գրական լեզու է: Երկու տեսություններն էլ իրենց մոտեցումները հիմնավորելու համար բերում են լեզվական ու պատմական մի շարք փաստեր: Հայերենի բարբառների ծագման հարցին տարբեր բանավեճերում անդրադարձել են Ս. Ղազարյանը, Է. Աղայանը, Գ. Ջահուկյանը և ուրիշներ՝ վերջնական տեսակետի չհանգելով: Այս խնդիրը, լինելով հայ բարբառագիտության կարևորագույն հարցերից մեկը, մինչ օրս վերջնական հանգուցալուծում չի ստացել: Մակայն մի հանգամանք պարզ է. ինչպես վկայում են յուրաքանչյուր լեզվի համաժամանակյա փաստերը, լեզվական միասնություն բնավ չի լինում, և ոչ մի լեզու դեռևս չի հասել դրան: Հետևաբար եզրակացությունը մեկն է. բարբառները միշտ եղել են որպես առանձին համակարգեր, իսկ գրական լեզուները, այդ թվում՝ գրաբարը, ձևավորվել ու զարգացել են բարբառներից մեկի հիման վրա:

Այժմ խնդրի մասին եղած մոտեցումները ներկայացնենք առանձին-առանձին:

2.1. Հայերենի բարբառների ծագումը ըստ տարբեր հետազոտողների

Հայագետ Ա. Մեյեն հայերենին նվիրված մի շարք ուսումնասիրություններում այն կարծիքն է հայտնել, որ հայերենի արդի բարբառները չունեն այնպիսի գծեր, որոնք հայտնի չլինեին գրաբարին և այդ հատկանիշներով կապվեին հնդեվրոպական հիմք լեզվի հետ: Ժամանակակից հայերենի բարբառները, ըստ Մեյեի, առաջացել են

հինգերորդ դարից հետո և համարվում են գրաբարի կրած հետագա ձևափոխություններ: Մեյեի այս տեսակետը որդեգրել է Հ. Աճառյանը՝ ասելով, որ գրաբարի ամենահին ձևը հնդեվրոպական նախալեզուն է, հետևաբար այն հայերենի սկզբնակետն է: Արդի բարբառները չեն ներկայացնում այնպիսի ձևեր, որոնք, ըստ նրա, «ձայնաբանություն կարող չլինեին առաջանալ գրաբարի ձևերից և ավելի հին լինեին, քան գրաբարի ձևերը»: Հ. Աճառյանը, հաշվի առնելով հինգերորդ դարի հայ մատենագիրների վկայությունները, գրում է, որ հինգերորդ դարում հայ ժողովրդի բոլոր հատվածները չեն խոսել միևնույն բարբառով, բայց այդ «բարբառները իրարից խիստ կերպով զանազանված չէին և կարելի է նրանց ավելի ենթաբարբառ կոչել, քան բարբառ»: Ըստ նրա՝ հայերենը նույնիսկ հինգերորդ դարում չի ունեցել բարբառներ:

Հայերենի բարբառների առաջացման աճառյանական տեսությանը հակադրվում է Ա. Ղարիբյանը: Իր տեսակետները նա ներկայացրել է ինչպես իր բարբառագիտական հետազոտություններում, այնպես էլ «Պատմաբանասիրական հանդեսում» և «Вопросы языкознания» ամսաթերթում տպագրած հոդվածներում: Ըստ Ա. Ղարիբյանի՝ հայ միասնական ցեղի քայքայումից հետո հայերենի մեջ գոյություն ունեցող բարբառային սաղմերն ակտիվացել են՝ վերածվելով բարբառային որոշակի տարրերի դեռևս հնագույն ժամանակներում: Ինչպես ցույց են տալիս Ա. Ղարիբյանի ներկայացրած փաստերը, Ք. ա. առաջին հազարամյակի սկզբում ձևավորվել են մեր հիմնական բարբառները, որոնք հետագայում ավելի ու ավելի են տարբերվել միմյանցից, ճյուղավորվել են, միմյանց համադրվել ու տարբերվել լեզվական առանձին հատկանիշներով՝ այս ձևով շարունակելով իրենց գոյությունը մինչև նոր ժամանակներ: Ա. Ղարիբյանի եզրահանգումն այն է, որ հայկական ֆեոդալիզմի ստեղծմանը և զարգացմանը զուգընթաց՝ հին բարբառները զգալի փոփոխություններ են կրել. նրանք իրենց ներսում բաժանվել են նոր բարբառների՝ առաջացնելով բարբառային ճյուղեր: Այս ճյուղավորումները նկատի ունենալով՝ Ա. Ղարիբյանը հայերենի համար ընդունում է շուրջ վաթսուն բարբառ, որը ներկայացված է նրա «Հայ բարբառների ծագման հարցի շուրջը» հոդվածում (Պատմաբանասիրական հանդես, 1958, հ. 3): Ա. Ղարիբյանն իր տեսակետը հիմնավորում է՝ հիմնականում հայերենի բարբառների և հնդեվրոպական հիմք լեզվի հնչյունական համակարգերի առնչակցությունները կարևորելով: Ըստ Ա. Ղարիբյանի՝ հայերենի բարբառների հնչյունական

համակարգերն իրենց գոյությունը պահպանել են հնդեվրոպական վիճակից սկսած: Այդ է պատճառը, որ բարբառներում ստեղծվել են բաղաձայնական տարբեր համակարգեր: Նրա ներկայացրած վիճակագրությունները ցույց են տալիս, որ հայերենի բարբառներից տասներկուսը պահպանել են հնդեվրոպական քառաստիճան բաղաձայնական համակարգը, իսկ գրաբարն ունի եռաշար բաղաձայնական համակարգ, հետևաբար նրանք ներկայացնում են բաղաձայնական համակարգի ավելի հին վիճակ, քան գրաբարն է:

«Հայ բարբառագիտության» մեջ (1953թ.) և հետագա մի շարք հոդվածներում Ա. Ղարիբյանը, ճշգրտելով և լրացնելով հայերենի բարբառների հնչյունական դասակարգումը, միաժամանակ փորձում է արդի բարբառների բաղաձայնական համակարգերն անմիջապես կապել հնդեվրոպական համակարգի հետ և դրա հիման վրա ցույց տալ բարբառների առաջացման ու ծագման պատմական հաջորդականությունը:

Ա. Ղարիբյանն առանձնացնում է բարբառային տարբերությունների առաջացման 4 փուլ.

ա) Հ.-ե. խուլերը վերածվում են շնչեղ խուլերի, ընդ որում՝ շնչեղ ձայնեղները և ձայնեղները պահպանվում են (Ք. ա. 15-8-րդ դդ.):

բ) Ձայնեղները վերածվում են խուլերի, և առաջանում են, այսպես կոչված, քառաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող բարբառները (Արարատյան, Մշո, Կարնո) (Ք.ա. 7-2-րդ դդ.):

գ) Շնչեղ ձայնեղները վերածվում են ձայնեղների, և առաջանում է գրաբարի բաղաձայնական համակարգը. սրան հաջորդում է ձայնեղների հետագա խլացումը և երկաստիճան ձայնեղագուրկ համակարգով բարբառների առաջացումը:

դ) Վերջապես, բարբառների մի ուրիշ խումբ (Աղձնիքի և Չորրորդ Հայքի բարբառները) խուլերը վերածում է շնչեղ խուլերի՝ անփոփոխ պահելով հ.-ե. ձայնեղները:

Հայերենի բարբառների ծագման դարիբյանական մոտեցումը չեն ընդունում Է. Աղայանը, Գ. Սևակը և Գ. Ջահուկյանը՝ «Պատմաբանասիրական հանդեսում» ներկայացնելով իրենց տեսակետները: Ըստ նրանց՝ արտաքնապես կուռ թվացող դարիբյանական մեկնաբանությունը խոցելի է և՛ պատմական պայմանների անբավարար հաշվառման, և՛ հ.-ե. բաղաձայնական համակարգի առանձնահատկությունների պարզունակ պատկերացման, և՛ հայերենի բարբառների առանձնահատկությունների

ձևական ու միակողմանի ներկայացման առումով: Նրանք հիմնականում պաշտպանում են Ա. Մեյեի և Հ. Աճառյանի տեսակետները՝ ընդունելով, որ «գրաբարը ավելի արխայիկ վիճակ է ներկայացնում և ավելի մոտ է հնդեվրոպական հիմնալեզվի վիճակին, քան բարբառներից որևէ մեկը»: Նրանց եզրակացությունը մեկն է. հայերենի բարբառներից և ոչ մեկը հին չէ այնքան, որքան գրաբարն է: Հայերենի բարբառները ներկայացնում են գրաբարյան համակարգի հետագա զարգացումը: Տարբեր ուղղություններով ու ձևափոխումներով գրաբարն ավելի հնատիպ է ու հին, քան մեր բարբառներից որևէ մեկը: Հայերենի բարբառներն առաջացել են գրաբարի կազմավորումից հետո և հենց գրաբարից, որը հին հայերենի գրավոր ավանդված վիճակն է: Հայերենի բարբառների հնչյունական ու քերականական համակարգերը հին հայերենի՝ գրաբարյան համակարգերից են սերել և չեն կարող ավելի հին լինել, քան նրանք:

Ըստ Է. Աղայանի՝ անհրաժեշտ է տարբերել հին հայերեն բարբառներ, որոնք Ք. ա. 15-14 դարերից սկսել են մահանալ, և նոր հայերեն բարբառներ, որոնք սաղմնավորվել են 4-5-րդ դարերից, երբ ամբողջապես մահացած են եղել հին հայերեն բարբառները: Գ. Սևակը, վիճարկելով պրոֆ. Է. Աղայանի հին ու նոր հայերեն բարբառների գոյության վարկածը, նշում է, որ հայերենի՝ մեզ ծանոթ բոլոր բարբառներն առաջացել են գրաբարյան համակարգից: Գ. Ջահուկյանը սխալ է համարում ժամանակակից բարբառների գրաբարից ծագած լինելը: Նա գրում է. «Ընդհանուր առմամբ վերցրած գրաբարը մեր ժամանակակից բոլոր բարբառներից էլ հին է, նրանցից ավելի շատ է պահպանել հին գծեր և իր խոսակցական ձևով այդ բարբառներից շատերի բազմաթիվ առանձնահատկությունների սաղմերի կրողն է»³:

Հայերենի բարբառների ծագման վերաբերյալ աճառյանական մոտեցում ունի նաև Ս. Ղազարյանը՝ անվիճարկելի համարելով այն, որ հայերենի ժամանակակից ոչ մի բարբառ չի կարող իր արդի վիճակով ավելի հին լինել, քան գրաբարը: Ըստ նրա՝ գրաբարը, գրի առնվելով հինգերորդ դարի սկզբներին, պահպանել է այդ ժամանակ ունեցած այն վիճակը, իսկ ժամանակակից բարբառները՝ իբրև ժողովրդի խոսակցական լեզուներ, անընդհատ փոփոխվել ու կատարելագործվել են, հարստացել են հինգերորդ դարում չեղած նոր բառերով ու քերականական ձևայիններով: Ս. Ղազարյանը

³ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության և հայերենի բարբառների ծագման հարցը*, Պատմաբանասիրական հանդես, Ե., 1959, հ. 2-3, էջ 282-319:

նույնպես չի բացառում հայերենի բարբառների գոյության վարկածը հինգերորդ դարում:

2.2. Հինգերորդ դարում հայ բարբառների գոյության հարցը

Այժմ ներկայացնենք այն լեզվական ու պատմական վկայությունները, որոնք հիմնավորում են 5-րդ դարում հայերենի բարբառների գոյության փաստը:

ա) պատմական փաստեր

Հինգերորդ դարում հայ բարբառների գոյության մասին հավաստի վկայություններ են տրամադրում այդ ժամանակաշրջանի հայ մատենագիրները: Եզնիկը տարբերում է երկու բարբառ՝ ստորնեայց և իր մայր բարբառը՝ ցույց տալով նրանց բառապաշարի միջև եղած տարբերությունները. «Յորժամ մեք ասեմք՝ թէ սիք շնչէ, ստորնեայք ասեն՝ այս շնչէ»: Հինգերորդ դարի մեկ այլ պատմիչ՝ Կորյունը, խոսելով իր ուսուցիչ Մաշտոցի կատարած աշխատանքի մասին, նշում է, որ Վաղարշապատից ոչ շատ հեռու՝ Մարաց կողմերում բնակություն հաստատած հայերի խոսքն անհասկանալի էր. «...ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն ճիւղադութեան, այլև վասն խեցբեկագոյն և խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք էին»:

Մ. Խորենացին, խոսելով Արամի նվաճումների մասին, ասում է, որ նա հրամայում է իր գրաված աշխարհի բնակիչներին. «...ուսանել զխաւսս և զլիզուս հայկական»: Իսկ երբ վերադառնում է հայոց գրերի ստեղծման հետ կապված դեպքերը, գրում է, որ «...մատուցեալ առ արքայն քահանայի ուրումն՝ Հաբել անուն կոչեցեալ, խոստանայր հայկականացս լեզուաց առնել նշանագիր»: Ինչպես տեսնում ենք, Մ. Խորենացու կիրառած «զխաւսս և զլիզուս», «լեզուաց» բառաձևերն ուղղակիորեն վկայում են հինգերորդ դարում հայերենի բարբառների գոյության մասին:

Հայերենի բարբառների գոյության մասին ավելի որոշակի են խոսում Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանիչը և այդ քերականության մեկնիչները: Նրանք, նկատի ունենալով Դիոնիսիոս Թրակացու քերականության բնագրում հիշատակված հունարեն բարբառները և նրանցից բերված օրինակները, աշխատել են դրանց մասին գաղափար տալ հայերենի բարբառներից վերցրած նմուշներով: Թրակացու քերականության հայ թարգմանիչը հունարեն բնագրի «Յաղագս անուան»

հատվածի «ΛΛΕΘV» (դորիական) բառի փոխարեն գրել է հայերեն Գորդայից անունը: Այդ ցույց է տալիս, որ այդ ժամանակ հայերը զանազանում էին Գորդայից բարբառը, որի մասին Դավիթ փիլիսոփան իր մեկնության մեջ գրում է. «Եւ գաղափարք հայրանուանցն, որպէս թէ անուն որդւոյն գառաջին վանկն ի հաւրն անուանէ ունիցի. իբր ի Բաբայ՝ Բաբգէն և ի Սամայ՝ Սամեան. ըստ որում և Գորդայիցն գաղափար է, զի որպէս դոքա ծեփելով ի համանուն լեզուէ ի խաւսս, նմանապէս և ի հոռոմին՝ Դովրացի իմն անուանեալ լեզու»: Դավիթ փիլիսոփայի այս վկայությամբ հաստատվում է, որ Գորդայից բարբառը հայտնի է եղել ինչպես հինգերորդ, այնպես էլ ավելի ուշ շրջանի հայ մատենագիրներին:

Դիոնիսիոս Թրակացու քերականության հայ մեկնիչներն իմացել են նաև, որ բարբառները առաջանում են միևնույն լեզվից («ծեփելով ի համանուն լեզուէ ի խաւսս») և ունեն իրենց բառապաշարային ու հնչյունական առանձնահատկությունները, ինչպես **Մանէճ** բառի **Մանայճ** տարբերակը, այնպես էլ, Անանուն մեկնիչի վկայությամբ, նաև շնչեղ բաղաձայնների խլացման ու խուլերի շնչեղացման երևույթները. «Այլ էր իսկ ճշմարտապէս և ի տեսակի խաւսիցն, որպէս բագուկ, պագուկ, փագուկ»:

Մեկ այլ քերական՝ Ստեփանոս Սյունեցին, ավելի տեսանելի է դարձնում հայ բարբառների գոյությունը: Նա, «Մեկնութիւն քերականին» աշխատության «Յաղագս քերականութեան» գլխում պատմելով լեզուների ուսումնասիրության մասին, եզրակացնում է, որ յուրաքանչյուր լեզվի այս կամ այն հարցը պարզելու համար անհրաժեշտ է օգտագործել ինչպես հարևան ժողովուրդների լեզուների, նույնպես և միևնույն լեզվի բարբառների տվյալները: Ավելի որոշակի խոսելով հայերենի մասին՝ գրում է. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ զբառսն զերերականս, որպէս զԿորճայն և զՏայեցին և զԽութայինն և զՉորրորդ-Յայեցին և զՍպերացին և զՄիւնին և զԱրցախայինն. այլ մի՛ միայն զմիջերկրեայսն և զոստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են, այլև աւգտակարք ի պատմութիւնսն, զի մի՛ վրիպեսցի անընդել գոլով լեզուացն»:

բ) լեզվական փաստեր

Հինգերորդ դարի գրական հայերենի բառապաշարն ուներ այնպիսի փաստեր, որոնք վկայում էին նրանց բարբառային ծագման մասին: Ստորև բերվում են այդ փաստերը:

ա) Միևնույն հասկացությունը տարբեր բառերով արտահայտելու հանգամանքը, որի մասին, ինչպես տեսանք, հիշատակություն ունի հինգերորդ դարի մատենագիր Եզնիկը:

բ) Հայերենի բարբառներում պահպանված են մի շարք բառեր, որոնք իրենց ծագումով ավելի հին են, քան հինգերորդ դարի հայերենը, բայց չեն արձանագրվել այդ շրջանի հայ մատենագիրների գործերում: Այդ բառերից մի քանիսը, ինչպիսիք են՝ **անձեղ, կաչաղակ, ջամուկ, հարևան**, քննում է Հ. Աճառյանը և նշում, որ դրանք շատ հին ծագում ունեն:

գ) Գրաբարի քերականության տվյալները ևս խոսում են բարբառների գոյության օգտին: Այսպես՝ միևնույն բառի տարբեր հոլովումների ենթարկվելը, **ի-ա, ո-ա** խառն հոլովումների գոյության փաստը, բայերի զուգահեռ ձևերը և այլ լեզվական իրողություններ վկայում են գրաբարում դրանց տարբեր բարբառների ազդեցության արտահայտություններ լինելու մասին:

դ) Բառերի հնչյունական տարբերությունները, ինչպես, օրինակ՝ ձայնեղ հնչյունների խլացման և խուլերի շնչեղխլացման դեպքերը: Այս մասին հիշատակություն ունի Անանուն մեկնիչը: **Ա** ձայնավորի **օ** արտասանությունը, որը տեսնում ենք Ստ. Սյունեցու գործերում և այլուր: Այս ամենը ևս խոսում են հինգերորդ դարում հայերենի բարբառների գոյության մասին:

Համակարգային է այն տեսակետը, որ հինգերորդ դարում հայերենն ունեցել է իր բարբառները, որոնք գրաբարին զուգընթաց շարունակել են իրենց գոյությունը, զարգացել ու կատարելագործվել են, իսկ գրաբարը պահպանվել է այն վիճակով, որը կա հինգերորդ դարի գրականության մեջ: Գրաբարում կատարված փոփոխությունները պայմանավորված են եղել գլխավորապես բարբառների ազդեցությամբ: Չի բացառվում նաև օտար լեզուների ներգործությունը, որը, իբրև ընդհանուր կանոն, արտահայտվել է բառապաշարի մեջ:

2.3. Բարբառներն ավելի հին են, քան գրաբարը

(վարկած)

Հայերենի արդի բարբառները չեն կարող ծագած լինել գրաբարից, որովհետև **գրաբար** եզրույթը վերաբերում է մի լեզվի, որը վերածվել է «գրական հայերենի», հետևաբար գրական լեզուն չի կարող դառնալ բարբառների հիմքը: Անժխտելի է այն հանգամանքը, որ ամեն մի գրական լեզվի հիմքում ընկած է որևէ բարբառ: Գրաբարը նույնպես ձևավորվել է որևէ բարբառի կամ բարբառների հիման վրա, հետևաբար հայերենի բարբառները չեն կարող առաջացած լինել գրաբարից:

Հայ ժողովրդի զարգացման յուրաքանչյուր շրջան ունեցել է լեզվական որոշակի վիճակ ու համակարգ՝ իրենց բնորոշող առանձնահատկություններով ու բարբառներով: Այդ բարբառները չէին կարող միևնույն ծագումն ունենալ: Ամենից առաջ հայ էթնոսի մեջ մտած ցեղերի լեզուներն ու բարբառները թե՛ իրենց հաղորդակցական գործառույթով, թե՛ լեզվական առանձնահատկություններով տարբեր են եղել, թեև նրանց միջև պահպանված են եղել ցեղակցական որոշ ընդհանրություններ, որոնք նույնպես փոփոխվել են հայ ժողովրդի զարգացման ընթացքում:

Հայերենի բարբառները հայ ժողովրդական լեզվի ճյուղավորումներն են, հետևաբար նրանք հայ ժողովրդի կազմավորումից առաջ ձևավորված լինել չէին կարող: Իսկ հայ ժողովրդի կազմավորումը, ինչպես ցույց են տվել պատմալեզվաբանական մի շարք ուսումնասիրություններ, սկսել է հնդեվրոպական միասնությունից անջատվելուց հետո (Ք.ա. 4-րդ հազ. երկրորդ կեսին) և վերջնականապես ավարտվել Վանի թագավորության՝ Արարատ-Ուրարտուի ժամանակաշրջանում (Ք.ա. 9-7-րդ դարեր): Հայերենի բարբառների մի զգալի մասը կազմավորվել է այդ շրջանում և հայ ժողովրդի զարգացման հետ փոփոխվել ու զարգացել: Հայերենի որոշ բարբառներ առաջացել են ավելի ուշ՝ հայ ժողովրդական լեզվի տրոհման կամ այդ լեզվին ձուլված այլ լեզուների հիման վրա: Ժամանակակից բարբառներից և ոչ մեկը հայ ժողովրդի կազմավորումից առաջ գոյություն չի ունեցել որպես հայերենի բարբառ:

Թեև հայերենի բարբառները չեն առաջացել գրաբարից, բայց իրենց արդի վիճակով նրանից հին չեն: Նույնիսկ նրանց այն մասը, որ կազմավորվել է հինգերորդ դարից առաջ, անընդհատ փոփոխվել ու զարգացել է, ձեռք է բերել նոր հատկանիշներ,

հեռացել է ոչ միայն իր սկզբնական վիճակից, այլև գրաբարից, որին հինգերորդ դարում, ամենայն հավանականությամբ, ավելի մոտ է եղել, քան ավելի ուշ շրջանում:

Բարբառները, հայ ժողովրդի կյանքում կատարված տեղաշարժերին զուգընթաց, կրել են տարաբնույթ փոփոխություններ: Իբրև ընդհանուր կանոն՝ ավելի պահպանվել են հնչյունական համակարգով և բառապաշարի որոշ շերտերով (դերանուններ, թվական անուններ, ընտանիք, ընտանեկան հարաբերություններ, բնական և բուսական աշխարհի երևույթներ արտահայտող բառեր և այլն), քան ձևաբանական համակարգերով: Ժամանակակից բարբառների ձևաբանական համակարգերը զարգացման մի շարք փուլեր են անցել, իսկ հնչույթային կազմը գրեթե անփոփոխ է մնացել, մասամբ՝ ստացել նոր դրսևորումներ:

Գլուխ 3

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Հայերենի բարբառների գոյությունը գիտությանը հայտնի էր շատ վաղուց, սակայն նրանց ուսումնասիրությունը, ինչպես արդեն նշվել է, սկսվել է 19-րդ դարից: Մրանով պայմանավորված՝ հայերենի բարբառների դասակարգման հարցն առաջ է եկել 19-րդ դարի 60-ական թվականներին: Հայերենի բարբառների դասակարգման սկզբունքները ներկայացվել են միահատկանիշ և բազմահատկանիշ դասակարգումներով: Հնչյունական և ձևաբանական զգալի տարբերություններով հանդերձ՝ հայերենի բարբառները խիստ անջրպետված չեն իրարից, և առանձին բարբառներ խմբավորվում, հանդես են բերում առավել ընդհանուր հատկանիշներ: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ հայագիտությունը դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսից ու հիմնականում 20-րդ դարում դասակարգել է հայերենի բարբառները և խմբավորել դրանք առավել մերձակից շարքերով:

Հայ բարբառագիտության մեջ կան հետևյալ դասակարգումները՝ ա) **աշխարհագրական դասակարգում**, բ) **ձևաբանական դասակարգում**, գ) **հնչյունական դասակարգում**, դ) **բազմահատկանիշ դասակարգում**: Եթե առաջին երեք դասակարգումները, հիմնված լինելով լեզվական մեկ հատկանիշի վրա, կոչվում են միահատկանիշ դասակարգումներ, ապա վերջինը կոչվում է բազմահատկանիշ, քանի որ հիմնված է մեկից ավելի լեզվական հատկանիշների վրա:

3.1. Հայերենի բարբառների աշխարհագրական դասակարգումը

Հայերենի բարբառների դասակարգումներին վերաբերող հարցադրումները դիտարկվում են հայ լեզվաբանության ձևավորումից սկսած և տևում մինչև 20-րդ դարի սկիզբը: Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանության և նրա մեկնությունների մեջ արդեն նշվում են բարբառային որոշ առանձնահատկություններ: Ինչպես նշվել է արդեն, հայ մեկնիչները հունարենի դորիական կոչված բարբառի փոխարեն հիշատակում են **Գորդայից** կամ **Կորճայից** կոչված բարբառը:

8-րդ դարի քերական Ստեփանոս Սյունեցին տալիս է հայ բարբառների տարածքային (տերիտորիալ) դասակարգման առաջին փորձը. «Եւ դարձեալ զքո լեզուիդ զիտելն զբովանդակ բառսն զեզերականս, որպէս զԿորճայն և զՏայեցին և զԽութայինն և զՉորրորդ Հայեցին և զՍպերացին և զՄիւնին և զԱրցախայինն. այլ մի՛ միայն զՄիջերկրայսն և զՈստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան. այլ և աւգտակարգ ի պատմութիւնս, զի մի՛ վրիպեսցի անընդել գոլով լեզուացն»:

Հայերենի բարբառների ուսումնասիրության գործընթացում որոշակի տեղաշարժ է նկատվում 17-18-րդ դարերում: Հայերենի բարբառների վերաբերյալ տեղեկություններ են պարունակում եվրոպացի հայագետներ Ֆրանցիսկոս Ռիվոլայի բառարանը (1633 թ.), որտեղ բերված են զգալի թվով բարբառային բառեր, և Յ. Յ. Շրյոդերի «Գանձ Արամեան լեզուի» աշխատությունը (1711թ.):

19-րդ դարը նշանավորվում է հայերենի բարբառների ուսումնասիրության և տարածքային (աշխարհագրական) դասակարգման բնագավառում կատարված զգալի առաջընթացով: Այս շրջանում հայերենի բարբառների աշխարհագրական դասակարգման մասին ի հայտ են գալիս մի շարք տեսակետներ: Առանձնապես հիշատակելի են Ա. Այտրնյանի և Ք. Պատկանյանի աշխատություններում բերված տվյալները: Նրանց կատարած տարածքային խմբավորումների մեջ կարևոր տեղ է տրվում ձևաբանական հատկանիշներին: Այս մոտեցումը մյուս դասակարգումներում, ինչպես կտեսնենք, մղվում է առաջին պլան: Ըստ Ք. Պատկանյանի, լեհ Հանուշի, Գ. Ախվերդյանի՝ հայերենի բարբառները հիմնականում բաշխվում են երկու խմբերի միջև՝ **հայերենի արևմտահայ բարբառներ և հայերենի արևելահայ բարբառներ**: Ք. Պատկանյանն արևելյան և արևմտյան բարբառախմբերի տարբերակման գլխավոր տարբերությունները համարում է ներգոյական հոլովի առկայությունը կամ սեռական հոլովով ու **մեջ** կապով այդ հոլովի իմաստի արտահայտումը, ներկայի դերբայական կամ մասնիկավոր կազմությունը: Տարածքային այս բաշխվածությունն արդարացվում է լեզվական առատ փաստերով: Սակայն 20-րդ դարի սկզբում, պայմանավորված Հայոց մեծ եղեռնով, տեղի են ունեցել զգալի տեղաշարժեր, որի հետևանքով միևնույն տարածքում տեղաբաշխվել են տարբեր հատկանիշներ ունեցող բարբառներ: Այս պատճառով արևելյան և արևմտյան խմբակցությունների առանձնացումը հաճախ չի համապատասխանում տարածքային տեղաբաշխմանը:

Աշխարհագրական դասակարգմանն անդրադարձել է նաև Ա. Այտընյանը «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» (Վիեննա, 1866) աշխատության «Նախաշաւիդ» հատվածում: Ըստ Ա. Այտընյանի տարածքային բաշխման՝ հայերենի բարբառները ներկայանում են աշխարհագրական չորս խմբավորումներով՝ ա) **միջին գավառական Հայաստան** (Վան, Միջագետք և այլն), բ) **Կոստանդնուպոլիս-Փոքր Ասիա**, գ) **Արևմտյան Արտեալ-Լեհաստան**, դ) **Արևելյան Աստրախան-Պարսկաստան**, որը ձգվում է Ռուսաստանից մինչև Հնդկաստան:

Ա. Այտընյանի դասակարգման հիմքում ընկած է աշխարհագրական սկզբունքը, և նկատի չեն առնված լեզվական բուն հատկանիշները: Ա. Այտընյանին ծանոթ են եղել **Վանի, Մշո, Պոլսի, Լեհահայոց, Աստրախանի, Երևանի և Ջուղայի** բարբառները, որոնց մասին նա հիշատակում է իր «Նախաշաւիդ» մեջ: Այդուհանդերձ, հեղինակն իր առանձնացրած յուրաքանչյուր խմբի համար նշում է որոշակի հատկանիշներ և գալիս որոշակի եզրակացության: Ըստ Ա. Այտընյանի՝ առաջին երեք խմբերն առավել մոտ են միմյանց և ներկայացնում են հին հայերենի օրինաչափ զարգացման վիճակը, այսինքն՝ այս բարբառները ծագում են հայերենի գրավոր ավանդված տարբերակից: Չորրորդ խմբի համար Ա. Այտընյանը միանգամայն այլ կարծիք ունի: Այս բարբառները ներկայացնում են հայերենի խոսակցական ինչ-որ տարբերակ և երբեք գրավոր ձևով չեն ավանդվել: Ա. Այտընյանը դրանք բնորոշում է «հին ռամկօրէն» անվանումով, որը բանավոր ձևով շարունակվել և հասել է մինչև մեր օրերը: Այս խմբի մեջ բնականաբար տեղաբաշխված են արևելահայ բարբառները: Փաստորեն, Ա. Այտընյանը, միավորելով առաջին երեք խմբերը և հակադրելով դրանք չորրորդ խմբին, կարծես նորից ընդունում է երկու խմբի բարբառներ՝ **արևելահայ և արևմտահայ**: Ընդ որում՝ արևմտահայ բարբառները գրաբարի փոփոխությամբ առաջ եկած խոսակցականներ են, իսկ արևելահայ բարբառները՝ գրաբարին զուգահեռ արտահայտված հին բանավոր լեզվի շարունակությունը: Ա. Այտընյանը մատնանշում է առաջին երեք խմբերի և արևելյան գավառականի հնչյունական և ձևաբանական մի քանի կարևոր տարբերակիչ հատկանիշներ, այդ թվում՝ **ոյ, իւ** երկբարբառների փոփոխության, **ներկայի, վաղակատարի, բացառականի** կազմության տարբերությունները, արևելյան բարբառներում՝ ներգոյականի առկայությունը:

Բարբառների դասակարգումը որոշակի ժամանակահատված ներկայացվում է երկու տիպով՝ **արևելյան** (ռուսահայ) և **արևմտյան** (տաճկահայ): Ռուսահայ և տաճկահայ եզրույթների կիրառումը պայմանավորված էր 19-րդ դարում Հայաստանի վարչաքաղաքական երկատվածությամբ: Բարբառների այսպիսի դասակարգման համար հիմք է հանդիսանում նաև այն, որ 19-րդ դարի կեսերից կազմակերպվում և քաղաքացիական իրավունք են ստանում գրական լեզվի երկու՝ **արևելահայ** և **արևմտահայ** տարբերակները: Արևելահայ գրական լեզվի համար հիմք են դառնում արևելահայ բարբառները, իսկ արևմտահայ գրական լեզվի համար՝ արևմտահայ բարբառները:

Վերոշարադրյալ փաստերից ակնհայտ է դառնում, որ հայերենի բարբառների առանձնակի նկարագրության և աշխարհագրական (տերիտորիալ կամ տարածքային) դասակարգման փորձերի շրջանը ներառում է 5-րդ դարից մինչև 19-րդ դարի սկիզբը:

3.2. Հայերենի բարբառների ձևաբանական դասակարգումները

Հայերենի բարբառների աշխարհագրական դասակարգումը չի արտացոլում բարբառների լեզվական բուն առանձնահատկությունները: Այն չէր կարող տիրապետող լինել երկար ժամանակ, ուստի 20-րդ դարի սկզբում առաջ են գալիս հայերենի բարբառների դասակարգման ավելի ճշգրիտ սկզբունքներ: Խոսքը հայերենի բարբառների ձևաբանական միահատկանիշ դասակարգման մասին է, որը հաջողությամբ կատարել է նախ Հ. Աճառյանը, ապա՝ Ա. Ղարիբյանը: Ձևաբանական դասակարգման սկզբունքի առաջաշման և տիրապետության շրջանն ընդգրկում է 20-րդ դարի սկզբներից մինչև նույն դարի 40-ական թվականների սկիզբը: Այս շրջանում, ի տարբերություն նախորդի, առաջին պլան է մղվում ձևաբանական սկզբունքը, և բարբառները խմբավորվում են ու անվանվում ըստ ձևաբանական հատկանիշների: Ձևաբանական դասակարգումը հենվում է աշխարհագրական (տերիտորիալ/ տարածքային) բաժանման վրա: Սակայն աշխարհագրական դասակարգումը ենթարկվում է ձևաբանական դասակարգմանը, և հիմք է ստեղծվում արդի բարբառների ավելի վաղ տարածքային մերձավորությունը պարզելուն:

Երբ առաջ է գալիս հայերենի բարբառների գիտական դասակարգման հարցը, անհրաժեշտություն է առաջանում գտնել բարբառների մեջ այնպիսի մի հատկանիշ, որը կընդգրկի մեծ թվով բարբառներ: Այդ հատկանիշն ընտրում է Հ. Աճառյանը: Նա տալիս է հայերենի բարբառների առաջին գիտական դասակարգումը «Հայ բարբառների դասակարգումը» ֆրանսերեն (Classification des dialectes arméniens, Paris, 1909) և «Հայ բարբառագիտություն. ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» (Մոսկվա-Նոր-Նախիջևան, 1911) աշխատություններում: Հ. Աճառյանի արժանիքը ոչ միայն հայերենի ձևաբանական խմբերի համընդհանուր ճշգրտումն է, այլև բազմաթիվ բնականավայրերի բարբառային դիրքի որոշումը և մի շարք բարբառների գիտական ուսումնասիրությունը: Իբրև բարբառների դասակարգման հիմունք՝ Հր. Աճառյանն ընտրում է ձևաբանական հատկանիշը, այն է՝ բայերի սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմության եղանակը: Ըստ ներկայի կազմության՝ հայերենի բարբառները բաժանում է երեք ճյուղի՝ **Ում** ճյուղ, **Կը** ճյուղ և **Էլ** ճյուղ: Առաջին ճյուղի մեջ ընդգրկվում են այն բարբառները, որոնք ներկան կազմում են անկատար դերբայով և ունեն **-ում**, **-ըմ**, **-ամ**, **-իմ** վերջավորությունները: Այդ ճյուղի մեջ են մտնում **Երևանի**, **Թբիլիսիի**, **Ղարաբաղի**, **Շամախու**, **Աստրախանի**, **Ագուլիսի** և **Ջուղայի** բարբառները: Երկրորդ ճյուղի մեջ ընդգրկվում են այն բարբառները, որոնք ներկա ժամանակը կազմում են հետևյալ՝ **կը-**, **զը-**, **գա-**, **գի-**, **գօ-**, **կու-**, **գու-** մասնիկներով: Այս ճյուղին պատկանում են **Վանի**, **Սշո**, **Կարնո**, **Խարբերդի**, **Երզնկայի**, **Տիգրանակերտի**, **Մալաթիայի**, **Սիրիայի**, **Կիլիկիայի**, **Ակնա**, **Մեքաստիայի**, **Արաբկիրի**, **Շապին-Գարահիսարի**, **Եվրոկիայի**, **Ղրիմի**, **Տրապիզոնի**, **Համշենի**, **Պոլսի**, **Զմյուռնիայի**, **Սուչավայի**, **Ռոդոսթոյի** և **Նիկոմիդիայի** բարբառները: Երրորդ ճյուղի մեջ ընդգրկվում են **Արդվինի**, **Մարաղայի** և **Խոյի** բարբառները, որոնց ներկան կազմվում էր **-էր**, **-իլ** կամ **-ալ** վերջավորություն ունեցող դերբայով:

Երբ նկատի ենք ունենում պատմական Հայաստանի տարածքային ամբողջականությունը և բացառում տեղի ունեցած գաղթերն ու տեղաշարժերը, Հ. Աճառյանի կատարած այսպիսի բաժանումը համընկնում է հայերենի բարբառների աշխարհագրական դասավորությանը: Հ. Աճառյանի կատարած դասակարգման ժամանակ **Ում** ճյուղի բարբառները դասավորված էին Հայաստանի հյուսիսային հատվածներ

րում, **Կը** ճյուղի բարբառները՝ Հայաստանի միջին, հարավային և արևմտյան հատվածներում, իսկ **Էլ** ճյուղի բարբառները՝ Հայաստանի արևելյան հատվածներում:

Պետք է նշել, որ բարբառաճյուղերի դասակարգումը հիմնելով ձևաբանական որոշակի հատկանշի վրա՝ Հ. Աճառյանը չի տալիս այս կամ այն ճյուղի մեջ մտնող բարբառների տարբերման որոշակի չափանիշներ, այլ առաջնորդվում է տարածքային հատկանշով՝ խառը կերպով այն գուգորդելով հնչյունական ու ձևաբանական ինչ-ինչ հատկանիշների հետ:

Հ. Աճառյանի առաջ քաշած սկզբունքը և դասակարգումը համարվում է գիտական, քանի որ հիմնված է բարբառների լեզվական հատկանիշների վրա: Նա վերցրել է մի այնպիսի հատկանիշ, որը համարվում է լեզվի էական մասերից ու գծերից մեկը, ընդգրկում է մեծ տեղ լեզվագործածության մեջ: Հայտնի է, որ բայը նախադասություն կազմող գլխավոր անդամներից մեկն է: Սահմանական եղանակի **ներկա** և **անցյալ** ժամանակները հաճախական կիրառություններ ունեն հաղորդակցության գործընթացում, հետևաբար այդ հատկանիշով բարբառի ճանաչումը դառնում է հեշտ, իսկ դասակարգումը՝ դյուրին:

Հայերենի բարբառների դասակարգման աճառյանական չափանիշը գիտական է անգամ այն առումով, որ համընկնում է բարբառների աշխարհագրական դասավորությանը, այդ թվում՝ արդարացվում է պատմությամբ: Տեղագրորեն միմյանց մոտ լինելով՝ հայերենի բարբառների մեջ առաջ են եկել ընդհանրություններ, որոնցից մեկն է նաև ներկայի կազմության եղանակը: Բարբառներից յուրաքանչյուրը, պահպանելով իրեն բնորոշ առանձնահատկությունները, ձևավորում է ընդհանրություններ իր հարևան բարբառների հետ: Այս ճանապարհով առաջանում են բարբառների տարբեր խմբեր ու ճյուղեր:

Ա. Ղարիբյանը, ով հայերենի բարբառների քանակը հասցնում է հիսունից մինչև վաթսունի, ևս կատարել է հայերենի բարբառների ձևաբանական միահատկանիշ դասակարգում՝ դարձյալ հիմնվելով սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմության վրա: Նա հայ բարբառների ձևաբանական դասակարգման մեջ հանդես է բերում տիպաբանական մոտեցում, քանի որ բարբառային նոր առանձնահատկությունների բացահայտումը և բարբառային նոր միավորների նկարագրությունը հիմք են տալիս ձևաբանական դասակարգման հետագա ճշգրտման, մանրամասնման

ու լրացման համար: 1953 թ. Ա. Ղարիբյանը «Հայ բարբառագիտություն» դասագրքում տարբերում է հայերենի բարբառների 3 խումբ և 7 ճյուղ՝ **Ում, Լ, Ս, Կը, Կա, միջճյուղային** և **գրաբարաստիպ**: Խմբերի առանձնացման համար հիմք է ծառայում տիպաբանական, ճյուղերի առանձնացման համար՝ նյութական ընդհանրությունը: Ըստ ներկայի և անցյալ անկատարի կազմության եղանակի տարբերվում են դերբայավոր, մասնիկավոր ու գրաբարակերպ խմբեր, ընդ որում՝ դերբայավոր խմբին հատկացվում է երեք՝ **ում, ս, լ**, մասնիկավոր խմբին՝ երեք՝ **կը, կա, հա** և գրաբարակերպ խմբին՝ մեկ ճյուղ. առանձնացվում են նաև միջճյուղային բարբառներ (**Թբիլիսի** և **Արեշ-Հավարիկ**):

Ա. Ղարիբյանն այս նոր տարբերակումները պայմանավորում է նրանով, որ Հ. Աճառյանի դասակարգումից հետո հայտնաբերում է հայերենի բարբառների մի նոր ճյուղ՝ կոչելով **Ս** ճյուղ: Ա. Ղարիբյանը որոշ ճշգրտումներ է մտցնում հայերենի բարբառների ձևաբանական դասակարգման մեջ: Հայերենի բարբառների **Ս** ճյուղի հայտնագործումով՝ Ա. Ղարիբյանը **Էլ** ճյուղը վերանվանում է **Լ**-ի, որովհետև **Էլ** ճյուղի բարբառների անկատար դերբայի վերջավորությունն է ոչ միայն **-ել-ը**, այլև **-ալ-ը** և **-իլ-ը** (*նիզել իմ «ուզում եմ», պիրիլ իմ «բերում եմ», կարդալ էմ «կարդում եմ»*), ուստի և այն կոչվում է **Լ** ճյուղ: **Էլ** ճյուղից դուրս է ընկնում **Արդվինի** բարբառը, որի դերբայական վերջավորությունն է **-ելիս** կամ **-ալիս**, իսկ բուն վերջավորությունն է **ս**, ուստի և ներառվում է **Ս** ճյուղի մեջ: Այդ վերափոխությունից հետո ձևավորվում է հայերենի բարբառների չորրորդ՝ **Ս** ճյուղը, որին պատկանում են հետևյալ բարբառները՝ **Արդվինի, Ուրմիայի, Ղարադաղի** (Շաղախի), **Մեղրու** և **Կարճնանի** բարբառները:

Նկատի ունենալով առանձին բարբառներում ներկայի կազմության գուգահեռ ձևերի գոյությունը՝ Ա. Ղարիբյանն ընդունում է նաև միջճյուղային բարբառներ: Այդպիսին են **Արեշ-Հավարիկի** և **Թիֆլիսի** բարբառները: **Արեշ-Հավարիկի** բարբառում լեզվաբանը նկատում է միաժամանակ և՛ **Ս**, և՛ **Լ**, և՛ **Ում** ճյուղերի հատկանիշներ: Այսպես՝ **Հավարիկի** բարբառը խոնարհումը կատարվում է հետևյալ ձևով՝ *գրելիս իմ, գրելում ես, գիրելում է, գիրելում ենք, գիրելում էք, գիրելում էե*: Պատմականորեն ձևավորված հարացույցն առաջացել է «շփումներից, համաձուլումից»: Այս բարբառի առաջին դեմքում դերբայն ունի **-ս**, մյուս դեմքերում՝ **-ում** վերջավորությունը, իսկ բուն դեմքերում առկա է **-լ**-ն, հետևապես Ա. Ղարիբյանն այդ բարբառը կոչում է **միջ-**

ճյուղային բարբառ: Այդ բարբառն առաջացած պետք է լինի **Ում, Լ** և **Ս** ճյուղերին պատկանող բնակչության փոխհարաբերությունների հետևանքով:

Ինչ վերաբերում է **Թիֆլիսի** բարբառին, ապա այն, ըստ Ա. Ղարիբյանի, ներկայի կազմությամբ տարբերվում է **Ում** ճյուղի մյուս բարբառներից: Այս բարբառում ներկան կազմվում է **Ում** ճյուղի սկզբունքով, սակայն **Թիֆլիսում** գործածական է նաև **կու** մասնիկով ներկայի առկայությունը: Այս գուգահեռ հատկանիշով էլ **Թիֆլիսի** բարբառը միջին դիրք է գրավում **Ում** և **կը** ճյուղերի միջև:

Կը ճյուղը ևս Ա. Ղարիբյանը բաժանում է երկու մասի՝ ընդունելով **կա** ճյուղի առանձնացումը **կը ճյուղից**: Այստեղ լեզվաբանը նկատի ունի, որ որոշ բարբառներում գործածվող ներկայի կազմության **կա** մասնիկը չի կարող ծագել **կու** մասնիկից: Ա. Ղարիբյանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ հայերենում **ու>ա** փոփոխությունն անընդունելի է: **Կու** մասնիկից **կ**-ի ծագումն օրինաչափ է, իսկ **կա** մասնիկն առաջ է եկել միանգամայն այլ ճանապարհով:

Ա. Ղարիբյանն ընդունում է գրաբարատիպ մեկ բարբառ. խոսքը **Խոտորջուրի** բարբառի մասին է: Այս բարբառի ներկա ժամանակը կազմվում է գրաբարաձև:

Այսպիսով՝ Ա. Ղարիբյանը հայերենի բարբառների համար ընդունում է հետևյալ ճյուղերը՝ **Ում, Լ, Ս, Կը, Կա, միջճյուղային** և **գրաբարատիպ**: Հ. Աճառյանի 3 ճյուղերի փոխարեն Ա. Ղարիբյանն առանձնացնում է 7 ճյուղ: Պետք է կարևորել նաև, որ Հ. Աճառյանի ձևաբանական սկզբունքի հիման վրա է Ա. Ղարիբյանը «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» աշխատության մեջ (1939 թ.) առանձնացնում, այսպես կոչված, **Ս** ճյուղը (**Արդվին, Շատախ, Կարճևան, Մեղրի, Հաղբութ, Ուրմիա**):

«Հայ բարբառագիտության» մեջ Ա. Ղարիբյանը **Ում** ճյուղին հատկացնում է 7 բարբառ (**Արարատյան կամ Երևան, Ղարաբաղ, Շամախի, Աստրախան, Նոր Զուղա, Ագուլիս** և, վերապահությամբ, **Թավրիզ-Մոզդոկ**), **Ս** ճյուղին 8 բարբառ (**Կոզեն, Արդվին, Մեղրի, Կարճևան, Հաղբութ, Դզմար, Քեյվան-Շաղախ** և **Ուրմիա**), **Լ** ճյուղին՝ 2 բարբառ (**Մարաղա** և **Խոյ**), **Կը** ճյուղին՝ 24 բարբառ (**Կարին, Մուշ, Տիգրանակերտ, Խարբերդ-Երզնկա, Օրդու, Նիկոմեդիա, Եվրոկիա, Շապին-Կարահիսար, Մալաթիա, Հաջըն, Զմյուռնիա, Պոլիս, Ռոդոսթոն, Նոր Նախիջևան, Վան, Դիաղին, Ոզմ, Մոկս, Տրապիզոն, Համշեն, Սիրիա, Ակն, Առդեալ և Մեքաստիա**), **Կա** ճյուղին՝ 5 բարբառ (**Ամասիա, Զեյթուն, Բեյլան, Սվեդիա** և **Մարաշ**), գրաբարատիպ ճյուղին՝ մեկ բարբառ

(**Խոստորջուր**): **Թբիլիսիի** և **Արեշ-Հավարիկի** բարբառները համարվում են միջճյուղային: Ըստ Ա. Ղարիբյանի՝ առաջինը գուգորդում է **Ում** և **Կը** ճյուղերի, երկրորդը՝ **Ում** և **Ս** ճյուղերի հատկանիշները: Այսպիսով՝ առանձնացվում է ընդամենը 51 բարբառ: Հետագայում Ա. Ղարիբյանը նշում է **Հա** ճյուղի երկու (**Արամո** և **Եվդոկիա**) և **Կը** ճյուղի մեկ բարբառ ևս (**Քարուսիե**):

Հայերենի բարբառների ձևաբանական դասակարգում կատարել է նաև **Է. Աղայանը**: «Մեղրու բարբառը» (1954թ.) մենագրության վերջին հատվածում նա տալիս է մոտավորապես նույն դասակարգումը: Տարբերությունը միայն այն է, որ միավորում է գրաբարակերպ ու մասնիկավոր տիպերը, տարբերում գրաբարակերպ-մասնիկավոր ու դերբայական կազմությամբ ներկայով բարբառներ: Է. Աղայանը Ա. Ղարիբյանի առանձնացրած «խմբերը» կոչում է «ճյուղեր», իսկ «ճյուղերը»՝ «ենթաճյուղեր»:

3.3. Հայերենի բարբառների հնչյունական դասակարգումը

Հնչյունաբանական դասակարգման սկզբունքի առաջաշման և ձևաբանական դասակարգման հետագա ճշգրտման ու մանրամասնման շրջանն սկսվում է 1940-ական թվականների սկզբից: Այս շրջանն սկսվում է հնչյունաբանական դասակարգման սկզբունքի առաջաշմամբ, որի կիրառմանը գուգընթաց քայլեր են կատարվում բարբառների ձևաբանական դասակարգման ճշգրտման ուղղությամբ:

Բարբառների հնչյունական դասակարգման սկզբունքն առաջ է քաշում Ա. Ղարիբյանը «Հայերեն բարբառների դասակարգման խնդիրը» հոդվածում (Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», 19, 1941, էջ 5-18): Նա իր տեսակետները հիմնավորում է բարբառագիտական մյուս հեղինակած աշխատություններում: Ա. Ղարիբյանը «Հայ բարբառագիտություն» դասագրքում ներկայացնում է հայերենի բարբառների մեկ այլ միահատկանիշ դասակարգում՝ կոչելով այն **հնչյունական**: Այս դասակարգման համար նա ելակետ է ընդունում հին հայերենի պայթական բաղաձայնների եռաշարք համակարգը, որոնք հայերենի բարբառներում ենթարկվում են օրինաչափ փոփոխությունների: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ Ա. Ղարիբյանը հայերենի բարբառների համար ընդունում է տեղաշարժեր՝ **առաջին տեղաշարժ**,

երկրորդ տեղաշարժ, տեղաշարժ-տեղափոխություն և **անտեղաշարժ** (գրաբարատիպ) բաղաձայնական համակարգեր ունեցող բարբառներ:

Հայերենի բարբառները ձևաբանորեն տարբերվում են և ընդգրկվում են տարբեր ճյուղերի մեջ: Սակայն տարբեր ճյուղերի մեջ ընդգրկված բարբառները միմյանց նման են հնչյունական օրինաչափություններով, հատկապես բաղաձայնական համակարգերով, ինչպիսիք են՝ **Վանի** և **Ուրմիայի** բարբառները, **Կարնո** և **Արարատյան** բարբառները, **Մեղրու** և **Ագուլիսի** բարբառները և այլն: Հայերենի բարբառների այսպիսի դրսևորումներն ստեղծում են հնչյունական դասակարգման նախադրյալներ և անհրաժեշտություն: Միննույն ճյուղին պատկանող բարբառների հնչյունական համակարգերի մեջ կան զգալի տարբերություններ, և այդ տարբերությունները հիմք են դառնում, որ բարբառները դասակարգվեն առանձին խմբերով: Դրանցով ավելի են ճշգրտվում այդ բարբառների առանձնահատկությունները: Օրինակ՝ **Վանի** և **Մշո** բարբառները պատկանում են միննույն **Կը** ճյուղին, սակայն այդ հանգամանքը լիակատար ցույց չի տալիս այդ բարբառներից յուրաքանչյուրի առանձնահատկությունները: Նրանց մեջ եղած տարբերությունները ցույց տալու համար լավագույն ելակետը դառնում է բաղաձայնական համակարգերի զուգադրումը. **Մշո** բարբառն ունի քառաստիճան բաղաձայնական համակարգ, իսկ **Վանի** բարբառը՝ եռաստիճան: Այս հատկանիշներն ավելի են որոշակիացնում այդ բարբառների տեղը բարբառների ընդհանուր դասակարգման մեջ: Նույնը կարելի է ասել նաև **Պուսի** և **Կարնո**, **Կիլիկիայի** և **Տրապիզոնի** բարբառների մասին և այլն: Այդ ամենից պարզ է դառնում, որ բարբառների ձևաբանական դասակարգումը բավական չէ, անհրաժեշտ է նաև նրանց հնչյունական դասակարգումը:

Հայերենի բարբառների հնչյունական դասակարգումը կարելի է կատարել զանազան եղանակներով: Հնչյունական դասակարգման հիմունք կարելի է դարձնել **հ~խ** հնչյունների զուգահեռ ձևերի արտահայտությունը հայերենի բարբառներում: Բարբառների մի խմբի արտասանության մեջ կա **հ` հաց, հայ, հեր, հավ, հոգի, հոր, հարս** և այլն, իսկ մյուս խմբի արտասանության մեջ այդ հնչյունի փոխարեն կա **խ` խաց, խեր, խավ, խօքի, խօր, խարս** և այլն: Հայերենի բարբառներում **հ**-ի փոխարեն **խ** են արտաբերում **Վանի** բարբառը և նրան շրջապատող բարբառներն ու խոսվածքները՝ **Ուրմիայի, Խոյի, Մոկաց, Ջուղայի** և **Բայազետի** բարբառները, **Մշո** բարբառի արևելյան

հատվածում գտնվող **Ալաշկերտի** խոսվածքը: Այս երևույթը, երբ համահայերենյան **հ**-ի փոխարեն ի հայտ է գալիս **խ** խուլ բաղաձայնը, ընդգրկում է սահմանափակ թվով բառեր: Այն համատարած ընդգրկում չունի: Հայերենի բազմաթիվ այլ բարբառներում այդպիսի փոփոխություն գոյություն չունի, հետևաբար այս հատկանիշը չի կարող հիմք դառնալ հայերենի բարբառների դասակարգման համար: Բարբառները դասակարգելիս հիմք կարելի է համարել նաև ձայնավորների ունեցած դրսևորումները: Ի հակադրություն բարբառների մեծ մասի՝ քմային **ü, ö, ü** ձայնավորները հայերենի մի շարք բարբառներում օրինաչափ արտահայտություն ունեն: Սակայն հայերենի բարբառների մեջ ձայնավոր հնչյուններն օրինաչափ փոփոխություններ չեն հայտարարում, հետևաբար ձայնավորների հիման վրա դասակարգում կատարելը հետևողական չէ:

Հայերենի բարբառների հնչյունական դասակարգում կատարելիս Ա. Ղարիբյանը նպատակահարմար է համարում հիմք վերցնել հին հայերենի ձայնեղ և խուլ (պարզ և շնչեղ) պայթական ու կիսաշփական բաղաձայնները: Այս բաղաձայնները հայերենի բարբառներում ենթարկվել են համակարգային փոփոխությունների:

Ըստ ձայնի և աղմուկի պարունակության՝ գրաբարում բաղաձայնների այդ համակարգերն ունեն հետևյալ պատկերը.

Ձայնեղ	<i>բ գ դ ձ ջ</i>
Խուլ	<i>պ կ տ ծ ճ</i>
Շնչեղ խուլ	<i>փ ք թ ց շ</i>

Վերոնշյալ բաղաձայնական շարքերից առաջին երեքը պայթականներ են, իսկ չորրորդ և հինգերորդ շարքերը՝ կիսաշփականներ:

Բաղաձայնների այս համակարգերն ընդգրկում են հնչյունական փոփոխություններ, որոնք օրինաչափորեն ներկայանում են տարբերակային ձևերով հայերենի բարբառներում՝ հանգեցնելով հնչյունական «տեղաշարժերի»: Բարբառների այսօրինակ դասակարգում կատարելով՝ Ա. Ղարիբյանը գրաբարի բաղաձայնական համակարգը համարում է անփոփոխ և կայուն: Հայերենի բարբառներում տեղի ունեցած տեղաշարժերը ներկայացվում են այդ համակարգի համեմատությամբ կրած փոփոխություններին համապատասխան:

Ա. Ղարիբյանը, կարևորելով հայերենի բարբառներում տեղի ունեցած բաղաձայնական փոփոխությունները, կարծում է, որ հայերենի բաղաձայնական համակարգը բոլոր բարբառներում փոփոխություն է կրում հիմնականում երկու տիպի տեղաշարժերի և մեկ տեղաշարժ-տեղափոխման միջոցով: Առաջին տեղաշարժ է կոչում ձայնեղների խլացման և շնչեղ խլացման երևույթները՝ **բ > պ, ք > փ, դ > տ, դ > թ, ձ > ծ, ձ > ց, ջ > շ, ջ > շ, գ > կ, գ > ք**, իսկ տեղաշարժ-տեղափոխություն՝ այդ երկու երևույթների միաժամանակյա առկայությունը միննույն բարբառում, այսինքն՝ ձայնեղների խլացում և խուլերի ձայնեղացում միաժամանակ՝ **բ > պ, ք > փ, պ > ք, դ > տ, դ > թ, տ > դ, ձ > ծ, ձ > ց, ծ > ձ, գ > կ, գ > ք, կ > գ**:

Այս ամենը նկատի ունենալով՝ Ա. Ղարիբյանը հայերենի բարբառները դասակարգում է հետևյալ կերպ.

ա) Բաղաձայնական համակարգի *առաջին տեղաշարժ*: Ըստ այս տեղաշարժի՝ ձայնեղ հնչյունները վերածվում են խուլ հնչյունների բոլոր այն բառերում, որոնք գործածված են գրաբարում և համահայերենյան բառեր են: Օրինակ՝

- բ > պ **բերան > պերան**
- դ > տ **դուռն > տուռ, տո՞ւռ, տօռնը**
- գ > կ **գինի > կինի, կինի**
- ձ > ծ **ձու > ծո՞ւ**
- ջ > ճ **ջուր > ճո՞ւր**

Նմանատիպ բաղաձայնական համակարգեր ունեն **Աստրախանի, Շամախի, Ղարաբաղի** (Ում ճյուղ), **Հաղրութի, Շաղախի, Ուրմիայի** (Ս ճյուղ), **Մարաղայի, Խոյի** (Լ ճյուղ), **Վանի, Սոկսի** (Կը ճյուղ) բարբառները: Այս բարբառների բաղաձայնական համակարգը երկաստիճան ձայնեղագուրկ է: Այդ տեղաշարժին չեն ենթարկվում թուրքական, պարսկական, արաբական նորագույն փոխառությունները, որոնք հայերենին են անցել 10-րդ դարից հետո, օրինակ՝ **բեգ, բախտ, գնդա, դուշման** և այլն:

բ) Բաղաձայնական համակարգի *երկրորդ տեղաշարժ*: Ըստ երկրորդ տեղաշարժի՝ խուլ հնչյունները ձայնեղանում են, իսկ ձայնեղները կարող են դառնալ շնչեղ ձայնեղներ հինհայերենյան բոլոր բառերում: Այս տեղաշարժն ունի երեք ենթախումբ և

կատարված տեղաշարժերի հետևանքով ստացվում են բարբառների հետևյալ խմբերը.

1. Այս ենթախմբի բարբառներն ունեն **երկշարք խլազուրկ բաղաձայնական համակարգ**: Այսպիսի համակարգ ունեցող բարբառներում խուլ բաղաձայնները բառասկզբի դիրքում վերածվում են ձայնեղների: Ձայնեղներն ու շնչեղ խուլերը մնում են անփոփոխ: Այս բարբառները հարուստ են ձայնեղներով. մի դեպքում ձայնեղները մնացել են անփոփոխ, իսկ մյուս դեպքում գրաբարյան խուլերը վերածվել են ձայնեղների:

պ > ք	պապ > բաք	բ > ք	բերան > քերան
տ > դ	տատ > դադ	դ > դ	դուռն > դուռ
կ > գ	կերագուր > գերագուր	գ > գ	գինի > գինի
ճ > ջ	ճակատ > ջագադ	ճ > ճ	ջուր > ջուր
ծ > ձ	ծուխ > ձուխ	ձ > ձ	ձու > ձու

Այդ խմբին են պատկանում Կը ճյուղի հետևյալ՝ **Պուսի, Եվդոկիայի, Ամասիայի, Մարգվանի, Սամսոնի, Ղրիմի, Նոր-Նախիջևանի և Տրապիզոնի** բարբառները:

2. Այս ենթախմբի բարբառներն ունեն **եռաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ**: Այն ձևավորվում է հետևյալ կերպ:

պ > ք	պապ > բաք	բ > ք	բերան > քերան
տ > դ	տատ > դադ	դ > դ	դուռն > դուռ
կ > գ	կերակուր > գերագուր	գ > գ	գինի > գինի
ծ > ձ	ծուխ > ձուխ	ձ > ձ	ձու > ձու
ճ > ջ	ճակատ > ջագադ	ջ > ջ	ջուր > ջուր

Կատարված տեղաշարժերից երևում է, որ խուլ բաղաձայնները վերածվել են ձայնեղների, ձայնեղ բաղաձայնները՝ շնչեղ ձայնեղների: Այստեղ ունենում ենք շնչեղ ձայնեղներ, ձայնեղներ և շնչեղ խուլեր, որոնք փոփոխության չեն ենթարկվել: Այս խմբին են պատկանում Կը ճյուղի հետևյալ՝ **Համշենի, Սյուրիայի, Ակնա, Արաբկիրի, Հաճրնի, (Կիլիկիայի ենթաբարբառ), Շապին-Գարահիսարի, Խարբերդ-Երզնկայի, Սուչավայի և Սեբաստիայի** բարբառները:

3. **Քառաստիճան բաղաձայնական համակարգ ունեցող բարբառներ**: Այս խմբում ընդգրկված բարբառները տարբերվում են նրանով, որ ձևավորվում են տարբեր դիր-

քերի համեմատությամբ: Եթե մյուս տեղաշարժերում և ենթախմբերում փոփոխության համար նկատի է առնվում բառասկիզբը, ապա այս ենթախմբում հաշվի են առնվում և՛ բառասկիզբը, և՛ մյուս երկու դիրքերը: Քառաշարք բաղաձայնական համակարգ ունեցող բարբառներում տեղաշարժերը ձևավորվում են հետևյալ կերպ. բառասկզբի ձայնեղները վերաժվում են շնչեղ ձայնեղների, բառասկզբում խուլ բաղաձայնները մնում են անփոփոխ, իսկ բառամիջում և բառավերջում դառնում են ձայնեղներ: Շնչեղ խուլերը մնում են անփոփոխ:

բ > բ՛	բերան > բ՛երան	Փարպի > Փարբի	պապ > պար
դ > դ՛	դուն > դ՛ուն	մանր > մանդրր	տատ > տադ
գ > գ՛	գինի > գ՛ինի	աշակերտ > աշագերդ	կերակուր > կերագուր
ձ > ձ՛	ձու > ձ՛ու	մեծ > մէնձ	ծուխ > ծուխ
ջ > ջ՛	ջուր > ջ՛ուր	ճանձ > ճանջ	ճակատ > ճագադ

Այս խմբին են պատկանում Կը ճյուղի **Կարն** և **Մշո** բարբառները, Ում ճյուղի **Երևանի** և **Նոր-Ջուղայի** բարբառները:

զ) Բաղաձայնական համակարգի տեղաշարժ-տեղափոխություն: Այս տեղաշարժն ունի բարբառների երկու ենթախումբ, որոնք սովորաբար անվանում են երկշարք խլագուրկ բաղաձայնական համակարգով և միջին հայերենի բաղաձայնական համակարգով ենթախմբեր: Տեղաշարժ-տեղափոխության այս համակարգում ձայնեղ հնչյունները վերաժվում են խուլ կամ շնչեղ խուլ հնչյունների, իսկ խուլ հնչյունները ձայնեղանում են:

1. Այս խմբի բարբառներն ունեն **երկաստիճան խլագուրկ բաղաձայնական համակարգ**, այսինքն՝ երկրորդ տեղաշարժի երկրորդ ենթախմբի նման խուլերը վերաժվում են ձայնեղների: Ի տարբերություն մյուս ենթախմբի՝ այստեղ ձայնեղները վերաժվում են շնչեղ խուլերի: Այս ենթախումբը հարուստ է շնչեղ խուլերով, այսինքն՝

բ > փ	բերան > փերան	պ > բ	պապ > բար
դ > թ	դուն > թուն	տ > դ	տատ > դադ
գ > ք	գինի > քինի	կ > գ	կերակուր > գերագուր
ձ > ց	ձու > ցու	ծ > ձ	ծուխ > ձուխ
ջ > չ	ջուր > չուր	ճ > ջ	ճակատ > ճագադ

Այս խմբին են պատկանում Կը ճյուղի հետևյալ՝ **Տիգրանակերտի, Մալաթիայի, Ռոդոսթոյի** և **Նիկումեդիայի (Ատափագար, Պարտիզակ, Ասլանբեկ** և այլն) բարբառները: Այս ենթախմբի հիման վրա են ձևավորվել արևմտահայ գրական լեզվի ուղղախոսությունը և արտասանությունը:

2. Միջին հայերենի համակարգին համապատասխանող բաղաձայններ ունեցող բարբառներ: Այս համակարգն ունի **եռաշարք բաղաձայնական համակարգ**, սակայն հին հայերենի համեմատությամբ կատարվում է մեկ տեղաշարժ տեղափոխություն: Այս համակարգում ձայնեղները վերածվում են խուլերի, իսկ խուլերը՝ ձայնեղների: Շնչեղ խուլերը մնում են անփոփոխ:

բ > պ	բերան > պերան	պ > բ	պապ > բաբ
դ > տ	դուռն > դուռ	տ > դ	տատ > դադ
ձ > ծ	ձու > ծու	ծ > ձ	ծուխ > ձուխ
ջ > ճ	ջուր > ճուր	ճ > ջ	ճակատ > ջագադ
գ > կ	գինի > կինի	կ > գ	կերակուր > գերագուր

Այս համակարգին պատկանում են **Կիլիկիայի** բարբառը և **Մարաշի** ենթաբարբառը, **Սասունի** և **Զեյթունի** բարբառները, **Շորվայան** թաղի խոսվածքը և **միջին գրական հայերենը**:

դ) Անտեղաշարժ բաղաձայնական համակարգ: Կա բարբառների մի չորրորդ խումբ (անտեղաշարժ համակարգ ունեցող), որի բաղաձայնական համակարգը բառակզբում փոփոխություն չի կրում: Այդ խումբն ունի երկու ենթախումբ. առաջին ենթախմբի բառամիջի և բառավերջի ձայնեղները վերածվում են շնչեղ խուլերի, օրինակ, *հարբել>հարփել, մարդ>մարթ, վարդ>վարթ* և այլն: Այս ենթախմբին են պատկանում **Թիֆլիսի** և **Արդվինի** բարբառները և **արևելահայ գրական լեզուն: Մեղրու, Կարճնանի** և **Ագուլիսի** բարբառները պատկանում են երկրորդ ենթախմբին: Այս բարբառների բաղաձայնական համակարգը գրաբարաձև է, որևէ փոփոխության չի ենթարկվում:

բ > բ	բերան > բերան	պ > պ	պապ > պապ
դ > դ	դուռն > դուռ	տ > տ	տատ > տատ
գ > գ	գինի > գինի	կ > կ	կերակուր > կերակուր
ձ > ձ	ձու > ձու	ծ > ծ	ծուխ > ձուխ

ջ > ջ

ջուր > ջուր

ճ > ճ

ճակատ > ճակատ

Բարբառների բաղաձայնական համակարգի այս տարբերակները ցայտուն կերպով երևան են գալիս հիմնականում բառակազմում և հատկապես բոլոր այն բառերում, որոնք գործածական են եղել դեռևս գրաբարում: Այդ երևույթները բացառություններ չունեն, հետևաբար հնում՝ հին հայերենի գրառման ժամանակահատվածում, գոյություն ունեցած բարբառային բաղաձայնական կայուն համակարգերի անհերքելի վկայություններ են: Կարևոր է նաև այն իրողությունը, որ համարյա բոլոր բարբառներում ձայնեղները բառամիջում վերածվում են շնչեղ խուլերի, իսկ խուլերը ռնգային բաղաձայներից հետո վերածվում են ձայնեղների՝ **վարդ > վարթ, կարգ > կարթ, որբ > որփ, ընկեր > ընգեր, փորձ > փորց, ճանձ > ճանջ, վերջ > վերչ** և այլն: Բացառություն են կազմում **Ագուլխի**, մասնակիորեն՝ **Մեղրու** և **Կարճևանի** բարբառները:

Ա. Ղարիբյանի կարծիքով՝ բարբառների հնչյունական դասակարգումը վկայում է, որ հայերենի բարբառները ցեղական անկախ լեզուների վերապրուկներ են, որոնք անփոփոխ են մնացել գրաբարի՝ կենդանի լեզու եղած ժամանակահատվածում, հայկական հին պետականության գոյության ժամանակաշրջանում և փոփոխության են ենթարկվել գրաբարին հաջորդած լեզվավիճակներում, այսինքն՝ 11-րդ դարից սկսած:

3.4. Հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգումը

Հայերենի բարբառների վերջին՝ բազմահատկանիշ դասակարգումը կատարել է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը «Հայ բարբառագիտության ներածություն» (1972թ.) աշխատության մեջ: Ըստ նրա՝ վիճակագրական բարբառագիտությունը բարբառագիտական նոր գիտակարգ (դիսցիպլին) է: Նա առաջ է քաշում բազմահատկանիշ-վիճակագրական սկզբունքը, որի հիման վրա հնարավոր է դառնում բարբառներն առանձնացնել ենթաբարբառներից և խոսվածքներից: Այս սկզբունքով Գ. Ջահուկյանը հայերենի համար ընդունում է 11 բարբառախումբ՝ 7-ը արևմտահայ խմբակցությունից, 4-ը՝ արևելահայ: Ընդունում է 44 բարբառ՝ 28-ը արևմտահայ, 16-ը՝ արևելահայ խմբակցություններից:

Բազմահատկանիշ դասակարգման սկզբունքի առաջքաշման և բարբառագիտական ատլասի նախապատրաստման շրջանն սկսվել է 1972 թվականից և տիրապետող է մինչ օրս: Դրա առաջին արտահայտություններից մեկը կարելի է համարել ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագետների կողմից Արարատյան բարբառի խոսվածքների բազմակողմանի ուսումնասիրությունը: Այն կատարվել է Գ. Ջահուկյանի նախաձեռնությամբ 1964 թվականից: Բարբառագիտական արշավախմբեր են ուղարկվել նախկին ՀՍՍՀ հարյուրավոր վայրեր, կատարվել են առանձին խոսվածքների նկարագրություններ, քայլեր են արվել դրանց փորձառական ուսումնասիրության ուղղությամբ և այլն:

Հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգումը կատարելիս Գ. Ջահուկյանը հաշվի է առնում հետևյալ կարևոր սկզբունքները.

ա) Ձևաբանական դասակարգման սկզբունքի փոխարեն հեղինակն առաջ է քաշում, այսպես կոչված, պատմաձևաբանական սկզբունքը: Այս դեպքում նկատի է առնվում ներկայի կազմությանը մասնակցող նախամասնիկների և դերբայական մասնիկների ելակետային վիճակը: Պատմականության պահանջը նախորդ դասակարգողների մոտ բավարար չափով հաշվի չի առնվել: Ինչպես հայտնի է, ճյուղերը կոչվում են մի կողմից **Ում**, մյուս կողմից՝ **Կը, Ս: Կը** ճյուղը պատմականորեն հանգում է **Կու-ին, Ս** ճյուղը՝ **Լիս-ին**, ընդ որում՝ երկուսն էլ հանդես են գալիս հնչյունական զգալի տարբերություններով: Պատմաձևաբանական դասակարգման դեպքում հայերենի բարբառների ձևաբանական (ձևատիպաբանական) դասակարգման երկու խմբերը համընկնում են պատմաաշխարհագրական դասակարգման ավանդական՝ **արևմտյան** և **արևելյան** խմբերի հետ: Այսպիսով՝ ձևաբանական դասակարգումը պատմականորեն հանգում է տերիտորիալ-աշխարհագրական հիմքերի առանձնացմանը:

բ) Հնչյունական դասակարգումը հիմք է տալիս մինչև 11-րդ դարն ընկած շրջանի, ձևաբանական դասակարգումը՝ 11-րդ դարից հետո հանդես եկող բարբառային էական տարբերությունները հասկանալու և ներկայացնելու համար: Հնչյունական ու բառային տարբերություններին զուգընթաց միջին շրջանի սկզբներից խորանում են ձևաբանական հիմնական տարբերությունները: Շարունակվում է նաև հնչյունական և բառապաշարային տարբերությունների խորացման գործընթացը:

զ) Նշվում է հայերենի բարբառագիտական աշխատություններում համաժամանակյա և տարածամանակյա սկզբունքների շփոթումը: Հնչյունաբանությունը հայ բարբառագիտական աշխատություններում սովորաբար կառուցվում է պատմական, ձևաբանությունը՝ ստատիկ հայեցակետով:

դ) Եղած դասակարգումների միակողմանիության հետևանքով այս կամ այն բարբառի ծագումը որոշելու համար հիմք է ընդունվում ոչ թե նրա հատկանիշների ամբողջությունը, այլ որևէ հատկանիշ՝ հնչյունական կամ ձևաբանական: Այսպես՝ Հ. Աճառյանը, հիմնվելով այն փաստի վրա, որ ձայնեղների խլացման երևույթն ընդգրկում է ասորական, հունական և պարսկական, բայց ոչ թուրքական փոխառությունները, գրում է. «Ձայնափոխության այս զանազանությունը ցույց է տալիս, որ օրենքը գործել է թուրքերի՝ Հայաստան գալուց առաջ, և հետևաբար Ղարաբաղի բարբառի ծագումը ընկնում է նույնպես ԺԲ դարուն»: Իբրև առարկություն՝ բերված փաստը խոսում է բարբառային տվյալ երևույթի (հատկանշի, զուգաբանության) ծագման ժամանակի, բայց ոչ Ղարաբաղի բարբառի ծագման մասին: Արցախի բարբառը բնութագրվում է զուգաբանությունների մի ամբողջ ցանցով: Այս նույն ձևով էլ Ա. Ղարիբյանը հայ բարբառների ծագման ժամանակը փորձում է պարզել միայն բաղաձայնների կրած փոփոխություններով: Նա գրում է. «...ոչ մի բարբառ որևէ էպոխայում իր բոլոր գծերով լիովին կազմավորված հանդես չի եկել և չէր էլ կարող հանդես գալ: Հայերենի բարբառների հնչյունական, քերականական և բառապաշարային հատկանիշները ձևավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում՝ պատմական տվյալ պայմաններից կախված ուժեղանալով, թուլանալով կամ նույնիսկ ընդհատվելով և պատմական տվյալ պայմաններում տալով բարբառային տվյալ խմբավորումները»⁴:

Վերոնշյալ սկզբունքները հաշվի առնելով՝ Գ. Ջահուկյանը հանգում է այն մտքին, որ բազմահատկանիշ դասակարգումը կատարելիս հայերենի նկատմամբ պետք է կիրառել լեզվաբանական աշխարհագրության սկզբունքները, բարբառային միավորներն առանձնացնելիս ելնել ոչ թե մեկ կամ երկու հատկանիշից, այլ հատկանիշների ամբողջությունից: Լեզվաբանական աշխարհագրությունից հայտնի է, որ բարբառների կենտրոնները և նրանց սահմանները որոշվում են ըստ քարտեզի

⁴ Տե՛ս Ա. Ղարիբյան, *Հայ բարբառների ծագման հարցի շուրջը*, Պատմաբանասիրական հանդես, Ե., 1958, հ. 3, էջ 240-266:

վրա երևացող զուգաբանության գծերի. ամենախիտ ցանց ունեցող վայրերը կլինեն բարբառային կենտրոններ, ամենանոսր ցանց ունեցող վայրերը՝ սահմանային: Ըստ Գ. Ջահուկյանի՝ շատ բարբառներ, որոնք Ա. Ղարիբյանի և այլոց կողմից հատկացվում են այս կամ այն խմբին, ունեն անցումային գծեր, իրենց տարբեր խոսվածքների բաղաձայնական առանձնահատկություններով առնչվում են մերթ մեկ, մերթ մյուս խմբի հետ: Այդ կապակցությամբ Գ. Ջահուկյանը գրում է. «Չի կարելի դատել բարբառային տարբերությունների մասին միայն բաղաձայնների հիման վրա: Արդեն այն փաստը, որ Ա. Ղարիբյանն ըստ բաղաձայնների առանձնացնում է բարբառների միայն 7 տիպ, բայց թվում է 57 բարբառ, խոսում է նրա սխեմայի պարզունակության մասին: Հայ բարբառները բնութագրվում են մեծաքանակ զուգաբանություններով (իզոգլոսներով), և միայն նրանց բազմակողմանի ուսումնասիրությունը կարող է հանգեցնել ճիշտ եզրակացությունների»⁵:

Նշելով հայերենի բարբառների դասակարգման բնագավառում եղած աշխարհագրական (տերիտորիալ), ձևաբանական, հնչյունական սկզբունքների առավելություններն ու թերությունները՝ Գ. Ջահուկյանի զուգաբանական-վիճակագրական սկզբունքը ներկայացնում է նախորդ բոլոր սկզբունքների համադրությունը՝ հնարավորություն տալով խուսափելու միակողմանիությունից: Գ. Ջահուկյանը բարբառները, ենթաբարբառներն ու խոսվածքներն առանձնացնելիս ելնում է օբյեկտիվ չափանիշներից և հնչյունաբանական ու քերականական առանձնահատկությունները բաշխում է ըստ պատմաաշխարհագրական սկզբունքների: «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատությունը հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման ու բարբառների դասդասման մի յուրատեսակ փորձ է:

Վիճակագրական-բազմահատկանիշ դասակարգման ճշգրտության և արդյունավետության համար էական նշանակություն է ունենում դասակարգման մեջ ընդգրկվող բարբառախոս միավորների (վայրերի) և բարբառային հատկանիշների ճիշտ ընտրությունը: Ամենամեծ ճշգրտությունն ունենում է այն դասակարգումը, որն ընդգրկում է բարբառախոս բոլոր վայրերը և բարբառային բոլոր տարբերակիչ հատկանիշները: Գ. Ջահուկյանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայ բնակչու-

⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը*, Երևան-Բեյրութ, 2000, էջ 185-193:

յունը դարերի ընթացքում արմատական տեղաշարժերի է ենթարկվել, և հայոց լեզուն խիստ հեռու է բարբառների դասավորության իդեալական վիճակից, բարբառախոս վայրերն ընտրելիս հաշվի է առնում այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են բնակավայրի մեծությունը, վարչական ու տնտեսական կարևորությունը, պատմական հնությունը, արդի բարբառագիտության համար ունեցած նշանակությունը և նկարագրվածության աստիճանը:

Բարբառախոս վայրերի ընտրության և դասավորության հարցում Գ. Ջահուկյանը հաշվի է առել հետևյալ սկզբունքները:

ա) Անդրկովկասից դուրս գտնվող վայրերի համար հիմք է ընդունվել հայ բնակչության այն դասավորությունը, որ գոյություն է ունեցել մինչև Առաջին համաշխարհային պատերազմը: Թուրքերի կազմակերպած հայերի համատարած կոտորածն ու տեղահանությունը, ինչպես նաև հայերի հետագա գաղթերը հայաբնակ զանազան վայրերից արմատապես խախտել են հայերենի բարբառների օրինաչափ դասավորությունը: Այժմ հնարավոր չէ խոսել **Զմյուռնիայի, Տրապիզոնի, Ջեթունի** և մի շարք այլ բարբառների մասին, որովհետև դրանց կրողները մասամբ բնաջնջվել են, մասամբ էլ ցրվել են աշխարհով մեկ: Անդրկովկասի հայ բարբառների դասավորությունը համեմատաբար քիչ է խախտվել, հետևաբար հիմք է ընդունվել արդի վիճակը՝ այժմ ընդունված անվանումներով:

բ) Նախքան առաջին համաշխարհային պատերազմը եղած վիճակը՝ մեծ չափով խախտված էր բարբառախոս վայրերի աշխարհագրական մերձավորությունը, ուստի նպատակահարմար չէ այս դեպքում կատարել բարբառախոս վայրերի զուտ աշխարհագրական դասակարգում: Նկատի ունենալով, որ Հ. Աճառյանն ընդհանրապես ճիշտ է նկատել տարբեր բարբառախոս վայրերի բարբառային մերձավորության աստիճանը՝ Գ. Ջահուկյանը զուտ աշխարհագրական սկզբունքով դասավորում է միայն բարբառային այն կենտրոնները, որոնց անունով Հ. Աճառյանը կոչել է խոսվածքների տվյալ խումբը, իսկ մնացած վայրերը, անկախ աշխարհագրական դիրքից, դասավորվում են այդ կենտրոնների մոտ: Այսպես՝ Գյումրին, ըստ բարբառային մերձավորության, տրվում է Կարինի մոտ, իսկ Կարինը, ըստ աշխարհագրական մերձավորության, դասավորվում է բարբառային կենտրոնների շարքում:

գ) Բարբառային հիմնական կենտրոնները դասավորվում են արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ: Այս դեպքում որոշ չափով հաշվի է առնվում բարբառների ավանդական բաժանումն արևմտյանների և արևելյանների, որոնց մեջ էլ շարժումը կատարվում է հիշյալ սկզբունքով: Այս բաժանումը, ինչպես հայտնի է, բացի աշխարհագրականից՝ ունի նաև պատմաավանդական և լեզվաբանական հիմք: Այս դեպքում նկատի ենք ունենում արևմտահայ և արևելահայ գրական լեզուների գոյությունը՝ ձևաբանական մի այնպիսի նկատելի տարբերությամբ, ինչպիսին ներկայի կազմությունն է:

Ներկայացված սկզբունքների հիման վրա Գ. Ջահուկյանը, հայերենի բարբառները բաժանելով երկու մեծ՝ **արևմտահայ** և **արևելահայ** խմբակցությունների, բարբառախոս վայրերի թիվը սահմանափակում է 120-ով, որոնք, ըստ վերոհիշյալ սկզբունքների, դասավորվում են հետևյալ կերպ.

ա) 1-72-ը ընդգրկում են «արևմտահայ» բարբառախոս վայրերը, ընդ որում՝ 1-12-ը՝ այն վայրերը, որոնց բարբառային կենտրոնները տեղադրված են Եվրոպայում և Արևմտյան Փոքր Ասիայում, 13-40-ը՝ պատմական Մեծ Հայքի արևմտյան և հարավարևմտյան հարակից շրջաններում, այդ թվում՝ պատմական Փոքր Ասիայում, Կիլիկիայում, Սիրիայում, 41-72-ը՝ պատմական Մեծ Հայքի արևմտյան և հարավարևմտյան շրջաններում:

բ) 73-120-ն ընդգրկում են «արևելահայ» բարբառախոս վայրերը, ընդ որում՝ 73-76-ը այն վայրերը, որոնց բարբառային կենտրոնները տեղադրվում են Հյուսիսային Կովկասում և Վրաստանում, 77-89-ը՝ Հայաստանում, 90-116-ը՝ Արցախում և 117-120-ը՝ Իրանում:

Ստորև բերվում են այդ վայրերը՝ 1. Սուչավա [Առդեալի], 2. Կուտի [Առդեալի], 3. Նոր Նախիջևան [Ղրիմի], 4. Չալթըր (Նոր Նախիջևանի գյուղերից) [Ղրիմի], 5. Ռոդոսթո (Թեքիրդաղ) [Ռոդոսթոյի], 6. Պոլիս [Պոլսի], 7. Նիկոմեդիա (Իզմիտ) [Նիկոմեդիայի], 8. Ասլանբեկ [Նիկոմեդիայի], 9. Պարտիզակ [Նիկոմեդիայի], 10. Սյոլոզ [Նիկոմեդիայի], 11. Ադափազար [Նիկոմեդիայի], 12. Ջմյուռնիա (Իզմիր) [Ջմյուռնիայի], 13. Եվդոկիա (Թոքատ) [Եվդոկիայի], 14. Մարզվան [Եվդոկիայի], 15. Ամասիա [Ամասիայի], 16. Օրդու [Օրդուի], 17. Տրապիզոն [Տրապիզոնի], 18. Ջեֆանոս (Տրապիզոնի գյուղերից) [Համշենի], 19. Մալա [Համշենի], 20. Մարթիլ (Ջանիկ) [Համշենի], 21.

Շապին - Կարահիսար [Շապին- Կարահիսարի], 22. Սեբաստիա [Սեբաստիայի], 23. Բրզնիկ [Սեբաստիայի], 24. Արաբկիր [Արաբկիրի], 25. Կյուրին [Արաբկիրի], 26. Էվերեկ (Կեսարիա) [Արաբկիրի], 27. Թոմարզա [Արաբկիրի], 28. Դարենդե [Արաբկիրի], 29. Ակն [Ակնի], 30. Մալաթիա [Մալաթիայի], 31. Օիվրիհիսար [Կիլիկիայի], 32. Հաջրն [Կիլիկիայի], 33. Զեյթուն [Կիլիկիայի], 34. Մարաշ [Կիլիկիայի], 35. Բեյլան [Կիլիկիայի], 36. Քեսաբ [Կիլիկիայի], 37. Հաջի-Հաբիբլի (Սվեդիա) [Սիրիայի], 38. Յոդուն – Օլուկ (Սվեդիա) [Սիրիայի], 39. Քաբուսիե (Սվեդիա) [Սիրիայի], 40. Արամո [Սիրիայի], 41. Կարին [Կարնո], 42. Լենինական [Կարնո], 43. Բաբերդ [Կարնո], 44. Խնդաձոր (Խոտորջուր) [Խոտորջուրի], 45. Խարբերդ [Խարբերդ- Երզնկայի], 46. Երզնկա [Խարբերդ- Երզնկայի], 47. Կամախ [Խարբերդ- Երզնկայի], 48. Հավորի (Սիրաքների) [Խարբերդ- Երզնկայի], 49. Ալթուն- Հուսեյն (Քղի) [Խարբերդ- Երզնկայի], 50. Իամայիլ (Չարսանջակ) [Խարբերդ- Երզնկայի], 51. Չմշկաձագ [Խարբերդ- Երզնկայի], 52. Տիգրանակերտ [Տիգրանակերտի], 53. Եդեսիա (Ուռհա) [Տիգրանակերտի], 54. Հազզո [Տիգրանակերտի], 55. Մուշ [Մշո], 56. Բուլանըղ [Մշո], 57. Խնուս [Մշո], 58. Ալաշկերտ [Մշո], 59. Մանազկերտ [Մշո], 60. Այգետուն (Մասուն – Տալվորիկ) [մշո], 61. Նիչ (Մասուն- Մոտկան) [Մշո], 62. Գելիեգուզան (Մասուն) [Մշո], 63. Բաղեշ (Բիթլիս) [Մշո], 64. Խլաթ [Մշո], 65. Արձեշ [Մշո], 66. Արծկե [Մշո], 67. Բաստ (Խիզան-Սպարկերտ) [Մշո], 68. Վան [Վանի], 69. Շատախ [Վանի], 70. Մոսկ [Վանի], 71. Ոզմ [Վանի], 72. Վարդենիս (Բասարգեչար) (Դիադինի) [Վանի], 73. Աստրախան [Աստրախանի], 74. Թավրիզ [Աստրախանի], 75. Թբիլիսի [Թբիլիսիի], 76. Արդվին [Արդվինի], 77. Երևան [Երևանի], 78. Քանաքեռ [Երևանի], 79. Աշտարակ [Երևանի], 80. Էջմիածին [Երևանի], 81. Կողբ [Երևանի], 82. Ղալաչա (Լոռի) [Երևանի], 83. Գյառգյառ (Լոռի) [Երևանի], 84. Աստապատ [Երևանի], 85. Կամո (Նոր բայազետ) [Երևանի], 86. Մեղրի [Մեղրիի], 87. Կարճևան [Մեղրիի], 88. Վարհավար [Մեղրիի], 89. Գուդեմնիս [Մեղրիի], 90. Ագուլիս [Ագուլիսի], 91. Յոնա [Ագուլիսի], 92. Ջուղա [Ջուղայի], 93. Նոր- Ջուղա [Ջուղայի], 94. Լիվասիան (Չահարմահալ) [Ջուղայի], 95. Հաթերք [Ղարաբաղի], 96. Ջանյաթաղ [Ղարաբաղի], 97. Մեհտիշեն [Ղարաբաղի], 98. Հարավ [Ղարաբաղի], 99. Շուշիքենդ [Ղարաբաղի], 100. Շուշի [Ղարաբաղի], 101. Կաղարծի [Ղարաբաղի], 102. Տումի [Ղարաբաղի], 103. Հաղրութ [Ղարաբաղի], 104. Շաղախ [Ղարաբաղի], 105. Բոլնիս- Խաչեն [Ղարաբաղի], 106. Ղազախ [Ղարաբաղի],

107. Թովուզ [Ղարաբաղի], 108. Կոզեն [Ղարաբաղի], 109. Կիրովաբաղ [Ղարաբաղի], 110. Շահումյանովսկ [Ղարաբաղի], 111. Գորիս [Ղարաբաղի], 112. Խանազահ (Ղարադաղ) [Ղարաբաղի], 113. Բուրդուր (Արևմտյան Փոքր Ասիա) [Ղարաբաղի], 114. Հավարիկ [Հավարիկի], 115. Շամախի [Շամախիի], 116. Քյարքյանջ [Շամախի], 117. Խոյ [Խոյի], 118. Փայաջուկ (Սալմաստ) [Խոյի], 119. Ուրմիա [Խոյի], 120. Մարաղա [Մարաղայի]:

Բարբառային հատկանիշների ընտրության ու նշանակման հարցում Գ. Ջահուկյանն առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով: Որպես բարբառների դասակարգման հիմք՝ ընտրել է 100 հատկանիշ, որոնք խմբավորել է հետևյալ կերպ. 1) հնչյունական 50 հատկանիշ՝ ա) 25 բաղաձայնական և 25 ձայնավորային, 2) քերականական, մասնավորապես ձևաբանական 50 հատկանիշ՝ ա) 25 անվանական (գոյական, ածական, թվական անուններ և դերանուններ) և բ) 25 բայական: Դասակարգողի համար չափանիշ են ծառայում հատկանիշների կարևորությունը և տարածվածությունը: Բարբառային հատկանիշներն առնվում են համանաժամանակյա (սինխրոնիկ, ստատիկ) կտրվածքով՝ ըստ արդի վիճակի, թեև այդ հատկանիշները կազմավորվել են պատմական տարբեր շրջաններում և ունեն ժամանակագրական տարբեր խորություն:

Բարբառային հատկանիշները ներկայացնելիս բնականաբար պետք է ունենալ համեմատության որոշակի եզր: Հայ բարբառագիտության մեջ մինչ այժմ այդպիսի եզր է ծառայել գրաբարը, երբեմն՝ արևելահայ կամ արևմտահայ գրական լեզուն: Շատ հետազոտողների մոտ հնչյունական հատկանիշների համար սովորաբար համեմատության եզր է ծառայում գրաբարը, ձևաբանական հատկանիշների համար՝ արդի գրական լեզվի երկու տարբերակներից մեկը (արևելահայ հետազոտողների մոտ՝ արևելահայ գրական լեզուն, արևմտահայ հետազոտողների մոտ՝ արևմտահայ): Ստացվում են տարբեր դեպքերի համար տարբեր էտալոններ: Իր դասակարգման մեջ Գ. Ջահուկյանն ունենում է համեմատության միևնույն էտալոնը, այն է՝ որոշել բարբառային հատկանիշները և դրանց հետևողական բացառմամբ հասնել մի վերացական՝ «ոչ բարբառային» վիճակի: Սրանով հնարավոր կարելի կլինի որոշել այս կամ այն գրական լեզվի բարբառային հիմքը:

Գ. Չահուկյանը հատկանշի առկայությունը նշանակում է գումարման (+), բացակայությունը՝ հանման (-) նշաններով, ուստի և աղյուսակում ընդգրկված յուրաքանչյուր վայր բնութագրվում է պլյուսների ու մինուսների որոշ քանակով և դրանց որոշ տիպի բաշխմամբ: Երբ որևէ վայրում տվյալ հատկանիշը գտնվում է սկզբնավորման կամ մահացման գործընթացում, չի ընդգրկում բոլոր կարևոր բառերը, նույն վայրում տալիս է գուգահեռ ձևեր և այլն, օգտագործում է \pm և \mp նշանները:

Աղյուսակների վերջում բերված թվանշանները ցույց են տալիս յուրաքանչյուր հատկանշի ընդգրկված գումարումների ընդհանուր քանակը: Գ. Չահուկյանն ընտրել է բարբառների դասակարգման վեց մակարդակ, որոնց համապատասխան ստացվում են հետևյալ կարգի միավորները՝ **բարբառային խումբ** (բարբառախումբ), **ենթախումբ**, **բարբառ**, **ենթաբարբառ**, **խոսվածք** և **ենթախոսվածք**: Իր սկզբունքն իրագործելու նպատակով հեղինակը դիմել է մեկ այլ միջոցի: Նա գտել է, որ հայերենում ամենից հեռացած բարբառային միավորներն են **Ագուլիսը** և **Կուտին**: Իր ընտրած 100 հատկանիշները կարևորելով՝ այդ երկու տարածքներն իրարից հեռանում են 66 ու կես հատկանիշով: Միավորների հաշվարկման համար Գ. Չահուկյանը դարձյալ ընտրել է մեկ ամբողջ հատկանիշ և կես միավորի արժեքով հատկանիշ: Այդ հատկանիշները նա նշում, գումարում է և հանում է համապատասխան նշաններով: Ընդ որում՝ հավասարարժեք են թե՛ տվյալ հատկանիշի առկայությունը, թե՛ բացակայությունը: Գ. Չահուկյանը կես միավորի առանձնացումը ներկայացնում է երկու ձևով՝ \pm և \mp : Ի՞նչ են նշանակում այս պայմանական նշանները: Առաջինը նշանակում է, որ այդ հատկանիշը լիարժեք գոյություն ունի, սակայն այն սկսում է վերանալ, իսկ երկրորդը նշանակում է, որ այդ հատկանիշը չկա, սակայն սկսում է ձևավորվել: Իր առանձնացրած 66 հատկանիշը Գ. Չահուկյանը բաժանում է 3 մակարդակների, և արդյունքը ներքին մակարդակն է, այսինքն՝ 66:3=22 հատկանիշ: Հինգ առանձնահատուկ միավորներից մինչև 22-ը խոսվածքներ են: Արդյունքը կրկնապատկում է, որից ստացվում է հետևյալ պատկերը. 22.5-ից մինչև 44-ը բարբառներ են, 44.5-ից մինչև 66-ը բարբառախումբեր են: Հայերենի բարբառների համար Գ. Չահուկյանը, ինչպես արդեն նշել ենք, ընդունում է 11 **բարբառախումբ**՝ 7-ը **արևմտահայ**, 4-ը՝ **արևելահայ** խմբակցություններից: Ընդունում է 44 **բարբառ**՝ 28-ը **արևմտահայ**, 16-ը՝ **արևելահայ** խմբակցություններից:

Բացի ժամանակակից բարբառներից՝ Գ. Ջահուկյանը փորձել է դասակարգել նաև 5-րդ դարի բարբառները: Այստեղ առանձնացրել է միայն **40** հատկանիշ, և ընդհանուր եզրակացությունն այն է, որ 5-րդ դարում հայերենի բարբառները միմյանցից հեռացված չէին. ունեին միայն խոսվածքային տարբերություններ:

Գլուխ 4

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

«Բարբառագիտության հիմունքներ» դասընթացում կարևոր նշանակություն ունի հայերենի բարբառների հնչյունական համակարգերի բնութագրումը, ինչպես նաև՝ նրանց հայտաբերած պատմական, դիրքային և փոխազդեցական հնչյունափոխության դրսևորումները: Այս համատեքստում բարբառագիտության մեջ կարևոր նշանակություն են ստանում հնչյունական օրենքները և դրանց սահմանումները: Հայերենի բարբառների լիակատար ուսումնասիրությունը կատարվում է միայն բարբառներում գործող հնչյունական օրինաչափությունների ու դրանց յուրահատկությունների բացահայտմամբ և հետազոտմամբ: Հայերենի բարբառների հնչյունահնչյոթային համակարգը ներկայացնելիս բնութագրվում են նրանց ծագումը, զարգացումը, կրած փոփոխությունները և պատմականորեն ներկայանալի վիճակը:

4.1. Հայերենի բարբառների հնչյունական համակարգերի առանձնահատկությունները

Հայերենի բարբառները հարուստ են հնչյուններով: Այդ հնչյունները գոյություն ունեն որոշակի տեղում և ժամանակահատվածում՝ գործելով մարդկանց կամքից անկախ: Հայերենի բարբառներում գործող հնչյունական համակարգերը հայերենի հնչյունական համակարգի բաղադրատարրերն են և արտահայտում են նրա տարբերությամբ դրսևորումները: Հայերենի բարբառներում գործել են այնպիսի հնչյունական երևույթներ, որոնց բացահայտումը հանգեցրել է հնչյունական օրենքների ընդունման: Այդպիսին է **Աճառյանի օրենքը**: Հայերենի բարբառների հնչյունական համակարգերը բազմաթիվ որակական կողմերով ներկայանում են նույնությամբ, իսկ մի շարք առումներով տարբերակվում են, ի հայտ են բերում յուրահատուկ օրինաչափություններ և որակներ: Ըստ այդմ էլ՝ այդ համակարգերը բնութագրելիս ներկայացվում է, որ դրանք ունեն և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ: Ասվածի վկայությունն է պայթական ու կիսաշփական բաղաձայնների ցուցաբերած առանձնահատկությունները հա-

յերենի բարբառների հնչունական դասակարգման մեջ: Հայերենի բարբառները կարող են միմյանց միավորվել կամ իրարից տարբերվել քմային ձայնավորների, ետնալեզվային քմային բաղաձայնների, շնչեղ ձայնեղների, ըմպանային հնչյունների, կոկորդային հնչյունների և այլ հնչունական հատկանիշների առկայությամբ կամ բացակայությամբ:

Հայերենի բարբառներում ևս արտահայտվում են պատմական, դիրքային և փոխազդեցական հնչունափոխության երևույթներ: Եթե դիրքային հնչունափոխությունն ընդհանրացված է հայերենի գրական և խոսակցական տարբերակներում, ապա պատմական հնչունափոխությունը միանգամայն տարբեր արտահայտություն է գտել գրական և խոսակցական լեզուներում: Պատմական հնչունափոխության ենթարկվում են ինչպես ձայնավոր և բաղաձայն հնչյունները, այնպես էլ հին հայերենի երկբարբառները՝ **ձիւն>ձընէլ** (դիրքային հնչունափոխություն), **ձիւն> ձին/ձուն** (պատմական հնչունափոխություն):

Ձայնավոր հնչյունների մեջ առավել կարևոր հնչունափոխություն է **ա, օ, ու** ետնալեզվային ձայնավորների քմայնացումները: Հայ լեզվաբանության մեջ քմային ձայնավորների առաջացումը հիմնականում ներկայացվում է երկու ուղղությամբ՝ **ա) պարսկերենի օրինաչափություն, բ) թուրքերենի օրինաչափություն**: Ըստ որոշ հայագետների՝ հայերենը հետևել է պարսկերենի օրինաչափությանը, հատկապես երբ քմայնանում է **ա** ձայնավորը: Այս օրինաչափության համաձայն՝ հին հայերենն ունեցել է երկու կարգի **ա** ձայնավոր՝ երկար և կարճ: Ընդ որում՝ նոր պարսկերենում երկար **ա**-ն դարձել է էտալոնային **ա**, իսկ կարճ **ա**-ն՝ քմային **օ**: Հայերենը չէր կարող հետևել այս օրինաչափությանը, քանի որ հայերենում, գրաբարից սկսած, չի արտահայտվել երկար և կարճ ձայնավորների տարբերակում: Թուրքերենի օրինաչափությունը պայմանավորված է առաջնային և ոչ առաջնային ձայնավորների առկայությամբ և տարբեր դիրքերում դրանց գործածությամբ, որոնք այդ լեզուներում կազմում են ձայնավորների ներդաշնակություն: Թուրքական լեզուներում ձայնեղների մոտ պարտադիր պետք է լինեն առաջնալեզվային ձայնավորներ: Առաջնալեզվային են քմային **օ, ու, օ** և **ի**, է ձայնավորները: Ոչ առաջնալեզվային ձայնավորները չեն կարող գործածվել ձայնեղների մոտ: Հայերենը չի տարբերակում նման ներդաշնակություն. հայերենի ոչ առաջնալեզվային ձայնավորները գործածվում են և՛ ձայնեղների, և՛ խու-

լերի մոտ: Բերվածից կարելի է ենթադրել, որ այս մոտեցումը ևս մերժելի է հայերենի համար: Քմային ձայնավորների առաջացմանն ամենայն մանրամասնությամբ անդրադարձել է Հ. Աճառյանը «Քննություն Վանի բարբառի» (1953 թ.) աշխատության մեջ: Նա հավաքել է բարբառներում եղած բոլոր քմային ձայնավորներով բառերը և նկատել է մի օրինաչափություն: Ընդունել է մի օրենք և այն իր անունով կոչել **Աճառյանի օրենք**: Օրենքը բաղկացած է երկու մասից, որոնք հետևյալ բնորոշումն ունեն.

ա) Գրաբարյան **բա, գա, դա, ձա, ջա** հնչյունակապակցությունները **Վանի** բարբառում դառնում են **պա, կա, տա, ծա, ճա**: Ա ձայնավորը քմայնանում է:

բ) Գրաբարյան **պա, կա, տա, ծա, ճա** հնչյունակապակցությունները Վանի բարբառում մնացել են **պա, կա, տա, ծա, ճա**: Ա ձայնավորը չի քմայնացել:

Այսպիսով՝ Վանի բարբառում տարբերակվում են երկու կարգի խուլերի շարքեր՝ քմային ձայնավորներով խուլեր և ոչ քմային ձայնավորներով խուլեր: Հենց այս յուրահատկության հիմքի վրա էլ Հ. Աճառյանը եզրակացնում է, որ քմային ձայնավորներն առաջացել են հայերենի զարգացման ներքին օրինաչափությամբ. ո՛չ պարսկերենը, ո՛չ թուրքերենը չէին կարող հիմք դառնալ հայերենի այդ տարածված հնչյունափոխության համար: Հ. Աճառյանը նույնությամբ ընդունում է **ու, օ** ձայնավորների քմայնացումը, որոնք արտահայտվում են անգամ **լ** և **վ** բաղաձայնների մոտ: Քմային ձայնավորներն արտահայտվում են հնչյունական դասակարգման առաջին տեղաշարժի բարբառներում: Էտալոնային **ա** ձայնավորը Նոր Բայազետի բարբառում ունի շրթնային արտասանություն՝ **մ**՝ *վարպէտ>վմրպէտ, արաղ>մրաղ, կառնոլ>կմնոլ* և այլն:

Հայերենի ու նրա տարածքային միավորների համար ընդհանրական արժեք ունի **բ**-ից և **դ**-ից առաջ է կամ **ա** ձայնավորների հավելումը՝ *աղինջ/եղինջ, արասան/երասան, երկաթ/արկաթ, երկանք/արկանք, երագ/արագ* և այլն: Այս երևույթը դեռևս արտահայտված էր գրաբարում և առավել մեծ տարածում է գտել հայերենի բարբառներում: Ելնելով այս տարբերակումից՝ Է. Աղայանն առանձնացրել է մի օրինաչափություն: Եթե բառամիջում արտահայտվում է **ա** ձայնավորը, ապա հայերենի բարբառների մի խմբում բառասկզբում ևս ավելանում է **ա**, իսկ բարբառների մեկ այլ խմբում անխտիր ավելանում է է՝ անկախ բառամիջի ձայնավորից: Է. Աղայանն այս երևույթը համարում է բարբառային հնագույն երևույթ, որն արտահայտվել է դեռևս

նախագրային հայերենում: Մյուս ձայնավորների փոփոխությունները համակարգային չեն և սահմանափակվում են փոքր թվով բարբառների շրջանակներում: Արցախ-Մյունիքի խոսվածքներում շեշտակիր ու ձայնավորը դառնում է **օ՝ տուն>տոն, շուն>շոն** և այլն: Թիֆլիսի բարբառում է ձայնավորը շեշտակիր վանկում դառնում է **ի՝ մենք>մինք, մեծ>միծ** և այլն:

Բաղաձայնների փոփոխությունները հիմնականում արտահայտվում են պայթական և կիսաշփական բաղաձայնների տեղաշարժերի մեջ: Առանձին երևույթներ ևս նկատելի են հայերենի բարբառներում: Առաջնալեզվային բաղաձայններից առաջ ետնալեզվային բաղաձայնները քմայնանում են, այսինքն՝ **գ, կ, ք** հնչյունները վերածվում են առաջնալեզվային **ջ, ճ, չ** հնչյունների՝ **ջ, ճ, չ՝ ջինի, «գինի», ջէլ «գայլ», ճիտը «սկեստը», ճերանք «կերանք», չմբաք «քմբաք», չմսար «քմսար»** և այլն: Ետնալեզվային շփական **ղ**-ն մի շարք բարբառներում պայթական արտաբերում ունի և հանդես է գալիս որպես **կ՝ դարիք՝կարիք, դասաք/կասաք, դօլտ/կօլտ** և այլն:

Հայերենի բարբառները հարուստ են նաև երկբարբառներով: Այսպիսի համակարգերով հատկապես ներկայանում են կենտրոնական Հայաստանի բարբառները: Օրինակ՝ Մշո բարբառում **օ, է** ձայնավորներն ունեն երկբարբառային արտասանություն շեշտակիր վանկում՝ **փօղ>փոօղ, մէծ>միէծ** և այլն: Հայերենի բարբառներում ընդհանուր օրինաչափություն է երկբարբառների մենաբարբառացման երևույթը: Եթե գրաբարյան երկբարբառներն աշխարհաբարում վերածվել են երկհնչյունների, ապա բարբառներում մենաբարբառացել են՝ վերածվելով պարզ ձայնավորների: Միակ ընդհանուրը **աւ>օ** փոփոխությունն է, և այդ հնչյունափոխությունը՝ որպես երկբարբառների մենաբարբառացման առաջին արտահայտություն, ընդհանուր է և՛ գրական, և՛ բարբառային տարբերակներում:

Գրաբարյան երկբարբառները մենաբարբառացել են հայերենի բարբառներում և չունեն խիստ տարբերակված բաշխվածություն: Օրինակ՝ **իւ** երկբարբառը թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ բարբառներում երկու կարգի փոփոխության է ենթարկվել՝ վերածվելով **ի** և **ու** ձայնավորների: Նույն կարգի փոփոխության է ենթարկվում նաև **ոյ** երկբարբառը՝ **քոյր>քուր/քիր**: Երկու տարածքներում տարբերակվում է միայն **այ** երկբարբառի փոփոխությունը. արևմտյան մի շարք բարբառներում դառնում

է ա, իսկ արևելահայ բարբառներում, ինչպես նաև կենտրոնական Հայաստանի մի քանի բարբառներում՝ է:

4.2. Հայերենի բարբառների գիտական տառադարձության չափանիշները

Բարբառագիտության մեջ մեծ կարևորություն ունի գիտական տառադարձությունը: Եթե գրական լեզուներում այս սկզբունքը կիրառել հնարավոր չէ, ապա բարբառներում այն պարտադիր է: Երևույթը հասկանալի է այն պարզ պատճառով, որ բարբառներում գործող հնչյուններից շատերը չեն արտահայտվել ո՛չ դասական հայերենում, ո՛չ էլ ժամանակակից գրական լեզուներում, հետևաբար բարբառներում յուրաքանչյուր նոր հնչյունի համար առանձնացվում են ինչ-ինչ պայմանական նշաններ: Գիտական տառադարձության հիմնական սկզբունքն է մեկ հնչյունին մեկ գիր համապատասխանությունը: Հայերենի բարբառների հնչյունական համակարգերի տառադարձության համար կիրառվում են մի քանի սկզբունքներ, որոնք պայմանավորված են առանձին հնչյունների համար տարբեր նշանների ընդունումով: Հայերենի բարբառների տառադարձությունն առաջինը ներկայացրել է Հ. Աճառյանը «Հայ բարբառագիտություն-Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» աշխատության մեջ: Հ. Աճառյանը խուսափել է լրացուցիչ նշանների գործածությունից և հայերենի տառերի տարբեր միացումներով ներկայացրել է բարբառների հնչյունական համակարգը: Օրինակ՝ Հ. Աճառյանը բաղաձայնների քմայնությունն արտահայտել է յ , իսկ շնչեղ ձայնեղությունը՝ ^h գրերով, քմային ա ձայնավորը՝ շրջված տեսքով և այլն: Ի տարբերություն Հ. Աճառյանի՝ Ա. Ղարիբյանը գիտական տառադարձությունը ներկայացնելիս կիրառում է նաև լրացուցիչ նշաններ՝ հաշվի առնելով այլ լեզուներում ընդունված պայմանական նշանները: Ընդհանուր ձայնավորները և բաղաձայնները պահպանվում են անփոփոխ, իսկ բարբառներում առկա լրացուցիչ հնչյունների համար նա ընդունել է հետևյալ պայմանական նշանները: Քմային ձայնավորներն արտահայտել է պարզ ձայնավորների և համապատասխան լրացուցիչ նշանների համակցմամբ՝ **ü**, **ñ**, **ö**: Հ. Աճառյանը, ինչպես տեսանք, այս հնչյուններն արտահայտել է առանց պայմանական նշանների՝ **շրջված ա (ü)**, **իւ (ñ)**, **էօ (ö)**: Եթե շնչեղ ձայնեղությունը Հ. Աճառյանն արտահայտում էր ^h-ով, ապա Ա. Ղարիբյանը՝ շեշտով՝ **բ´, գ´, դ´, ձ´, ջ´**: Հ.

Աճառյանի և Ա. Ղարիբյանի կիրառած տառադարձման կանոնները լիակատար չեն: Հայերենի բարբառների հնչյունական համակարգերի գիտական տառադարձությունը ճշգրտել ու ամբողջացրել են բարբառագետներ Մ. Աղաբեկյանը, Ա. Հանեյանը և Ռ. Ուռուսյանը: Նրանց տառադարձումները՝ «Հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգը» խորագրով, զետեղված են «Հայերենի բարբառագիտական ատլաս»-ի (2010 թ.) երրորդ գրքում: Հեղինակները ոչ էտալոնային ձայնավորների համար ներկայացնում են քառասուներեք նշան՝ որպես էտալոնային ձայնավորների դիրքային ու որակական տարբերակներ, իսկ ոչ էտալոնային բաղաձայնների համար ներկայացնում են հարյուր վեց նշան՝ որպես նրանց դիրքային ու որակական տարբերակներ⁶: Քանի որ գիտական տառադարձության ողջ էությունը ոչ էտալոնային հնչյունների ճշգրտորեն արտացոլելն ու տառադարձելն է, հետևաբար պետք է ասել, որ կատարված տառադարձումները վերջնական չեն. չի բացառվում, որ հայերենի բարբառներում դեռ կան այնպիսի հնչյուններ, որոնք դեռևս չեն գրանցվել ու տառադարձվել:

4.3. Հայերենի բարբառների ձևաբանական, շարահյուսական համակարգերի ընդհանրությունները և տարբերությունները

Հայերենի բարբառների միջև կան շատ մեծ տարբերություններ: Աշխարհագրորեն հարևան բարբառներն իրար նման են, հեռու գտնվող բարբառները խիստ տարբեր են: Օրինակ՝ **Արցախի** բարբառի և **Զեյթունի** բարբառի միջև այնքան շատ տարբերություններ կան, որ այդ բարբառներով խոսողները միմյանց չեն կարող հասկանալ: Միմյանց չեն հասկանում նաև **Տիգրանակերտի** և **Թբիլիսիի** բարբառներով խոսողները, իսկ **Ագուլիսի**, **Մեղրու** և **Կարձևանի** բարբառները հասկանալի են ոչ բոլոր հայերին: Բավական մեծ տարբերություն կա **Մոկաց** և **Երևանի**, **Ուրմիայի** և **Ռողոսթոյի** բարբառների միջև և այլն: Ի հակադրություն սրա՝ **Վանի** և **Ուրմիայի**, **Երևանի** և **Թբիլիսիի**, **Տրապիզոնի** և **Պոլսի**, **Ուրմիայի** և **Խոյի**, **Արցախի** և **Շամախու**, **Կարնո** և **Սշո** բարբառների միջև կան զգալի նմանություններ: Որքան աշխարհագրորեն մոտ են դա-

⁶ Տե՛ս Մ. Աղաբեկյան, Ա. Հանեյան, Ռ. Ուռուսյան, *Հայերենի հնչատարբերակների տառադարձման նոր համակարգ*, Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, Ե., 2010, էջ 5-22:

սավորված եղել հայերենի բարբառները, այնքան ավելի են մերձեցել լեզվական առումով:

Հայերենի բարբառների ձևաբանական համակարգերի տարբերությունները ներկայացնելիս նախ և առաջ հիմք է ընդունվել սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմության սկզբունքը՝ որպես բարբառների ճյուղերի տարբերակման հիմք ու միահատկանիշ դասակարգման չափանիշ: Այս հատկանիշով տարբերակվել են **արևելահայ** խմբակցության և **արևմտահայ** խմբակցության բարբառները: Ներկա ժամանակի կազմության սկզբունքով պայմանավորված սահմանազատումից բացի՝ երկու խմբակցությունների բարբառներում կան ձևաբանական և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ: Հայերենի բարբառների ձևաբանական տարբերակման հիմք կարող են լինել հոգնակի թվի հոլովական պատկանելությունը, անձի և իրի առումը, բացառական հոլովի կազմությունը, սեռական հոլովի հոդառությունը, ապառնի ժամանակաձևերի իմաստների արտահայտումը, հարակատար դերբայի կիրառությունները, վաղակատար դերբայի կազմությունը, ներգոյական հոլովի կազմությունը և նրա իմաստի արտահայտման սկզբունքը, դասական թվականների կազմության, ածականի համեմատության աստիճանների արտահայտման ձևաբանական, նկարագրական միջոցները և այլ հատկանիշներ: Երկու մեծ՝ **արևելյան** ու **արևմտյան** խմբակցությունների միջև եղած տարբերությունների մի քանի առանձնահատկություններ ներկայացնենք ստորև.

ա) Եթե արևելահայ բարբառներում հոգնակի թիվը ենթարկվում է **ի** հոլովման, ապա արևմտյան բարբառներում՝ **ու** հոլովման:

բ) Տարբերակվում է անձի և իրի քերականական կարգը: Եթե արևելահայ բարբառներում դրանք հստակորեն տարբերակվում են, քանի որ ուղղականաձև հայցականը գործածվում է իրերի առման դեպքում, իսկ տրականաձև հայցականը՝ անձերի առման դեպքում, ապա արևմտյան մի շարք եզրային բարբառներում դրանք չեն տարբերակվում՝ և՛ անձի, և՛ իրի առման դեպքում մնալով հայցականաձև, օրինակ՝ ***մայրը կը սիրե իր երեխան, Պողոսը կը ծեծե Պետրոսը:***

գ) Բացառական հոլովն արևմտահայ բարբառներում ունի -է վերջավորությունը, որը սովորաբար գործածվում է հոդով, իսկ արևելահայ բարբառներում՝ -ից վերջավորությունը:

դ) Արևմտյան բարբառներում սեռական հոլովը սովորաբար ստանում է որոշյալ հոդ, իսկ արևելյան բարբառներում այն ունի հիմնականում անհոդ կիրառություն:

ե) Ապակատար դերբայն արևմտահայ բարբառներում բայական կիրառությամբ սակավ է գործածվում: Ապառնու իմաստն այս բարբառներում արտահայտվում է ենթադրական և հարկադրական եղանակների ժամանակաձևերով:

զ) Վաղակատար դերբայն արևմտահայ բարբառներում ունի **-եր** վերջավորությունը՝ *խօսէր էմ, ասէր էմ* և այլն, իսկ արևելահայ բարբառներում՝ **-ել** վերջավորությունը:

է) Հարակատար դերբայն արևմտահայ բարբառներում հաճախ է հանդես գալիս դիմավոր բայի կիրառությամբ: Այդպիսի գործածությամբ հանդես են գալիս ներգործական սեռի բայերը, շատ հաճախ հարակատար դերբայը փոխարինում է վաղակատար դերբային, օրինակ՝ *տեսած էմ, ասած էմ* և այլն:

ը) Օժանդակ բայի անցյալ ժամանակաձևն արևմտահայ բարբառներում ունի է հիմք, այսինքն՝ համապատասխանում է աշխարհաբարի օժանդակ բայերին՝ **էի, էիր, էր, էինք, էիք, էին**:

թ) Արևմտահայ բարբառներում ներգոյական հոլովի առանձին ձև գոյություն չունի. այն արտահայտվում է սեռական հոլովով և **մեջ** կապով, իսկ արևելահայ բարբառներում զուգահեռ արտահայտվում է **-ում** հոլովական վերջավորությամբ:

Հայերենի բարբառներում շարահյուսական տարբերությունները մեծ չեն: Հայերենի բարբառներում նախադասության դրսևորած առանձնահատկությունները չեն տարբերվում այն համակարգերից, որ եղել են հայերենի զարգացման հատկապես միջինհայերենյան, աշխարհաբարյան ու արդի փուլերում: Ընդհանուր գնահատականն այն է, որ այս համակարգում հայերենի բարբառների միջև եղած տարբերությունները չնչին են: Եղած տարբերությունները վերաբերում են համաձայնությանը և շարահասությանը: Այդ պատճառով հայ բարբառագիտության մեջ շարահյուսական իրողությունների առանձնահատկություններին համապարփակ անդրադարձ երբևէ չի կատարվել, որը, պետք է ասել, հայ բարբառագիտության բաց օղակներից է:

4.4. Հայերենի բարբառների բառային համակարգերը

«Բարբառագիտության հիմունքներ» տեսական դասընթացում քննարկվում են նաև բարբառների բառային համակարգերը՝ դիտարկվելով ոչ միայն համաժամանակյա, այլև պատմական բառագիտության տեսանկյունից: Հայերենի բարբառներն իրենց բառային համակարգերով և՛ միավորվում են, և՛ տարբերվում, քանի որ արտացոլում են պատմական, մշակութային ու հասարակական այն զարգացումներն ու տեղաշարժերը, որոնց կրողը հայ ժողովուրդն է: Համահայկական կամ ընդհանրական բառերի գործածության առումով հայերենի բարբառները միավորվում են՝ հայտաբերելով միայն հնչյունական տարբերություններ, իսկ փոխառությունների ու տարատեսակ բառ-հասկացությունների կիրառման հարցում՝ տարբերվում: Հիմնական բառաշերտի ընդհանրություններն այնքան մեծ են, որ շատ հաճախ դժվար է դառնում բառային զուգաբանություններ առանձնացնելը:

Հայերենի բարբառներում բառապաշարային տարբերությունները երկու ձևով են դրսևորվում. մի դեպքում տարբերությունը բառային է, այսինքն՝ տվյալ հասկացության դիմաց տարբեր վայրերում հանդես են գալիս տարբեր բառային միավորներ՝ կազմելով բառանվանողական զուգաբանություններ, մյուս դեպքում՝ իմաստային, երբ համահայկական բառային միավորը տարբեր վայրերում ունի իմաստային տարբեր կիրառություններ:

Հայերենի բարբառների բառային համակարգերի դիտարկումներում մեծ տեղ է հատկացվում նաև բարբառների բառային կազմի բազմաշերտությանը: Բարբառների բառային կազմերը ներկայացվում են որոշակի բառիմաստային-թեմատիկ խմբերով: Ընդհանուր քննության են դրվում բարբառների բառապաշարի ծագումնաբանական շերտերը, առանձին խմբերով վեր են հանվում ժառանգորդային-համահայերենյան բառերը, բարբառային բառերը, չստուգաբանված բարբառային բառերը և տարբեր լեզուներից կատարված փոխառությունները: Հստակորեն ցույց են տրվում հայերենի բարբառներում գործող բառային համակարգերի ծագման ներքին և արտաքին աղբյուրները: Հատուկ քննության են դրվում նաև բարբառներում գործող բառակազմական կաղապարների առանձնահատկությունները:

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ

1. Աբրահամյան Ա., *Դիտողություններ բարբառների զարգացման ներքին օրենքների վերաբերյալ*, ԳԱՏ, Ե., 1955, N 7:
2. Աղայան Է., *Բարբառային հնագույն տարբերությունները հայերենում*, ԳԱՏ, Ե., 1958, N°5:
3. Աղայան Է., *Մեղրու բարբառը*, Ե., 1954:
4. Աղայան Է., *Նոր հայերենի բարբառների առաջացման մասին*, ՊԲՀ, Ե., 1958, N° 2:
5. Աճառյան Հ. *Թուրքերեն փոխառյալ բառեր հայերենի մեջ* (Պոլսի, Վանի, Ղարաբաղի և Նոր-Նախիջևանի բարբառներ), Մոսկվա — Վաղարշապատ, 1902:
6. Աճառյան Հ., *Հայ բարբառագիտություն.-Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների*, Մոսկվա-Նոր-Նախիջևան, 1911:
7. Աճառյան Հ., *Հայերեն գավառական բառարան, Էմինյան ազգագրական ժողովածու*, հ. Թ, Մոսկվա, 1913:
8. Աճառյան Հ., *Հայոց լեզվի պատմություն*, Երկրորդ մաս, Ե., 1951:
9. Աճառյան Հ., *Քննություն Ազուլիսի բարբառի*, Ե., 1935:
10. Աճառյան Հ., *Քննություն Առտիալի բարբառի*, Ե., 1953:
11. Աճառյան Հ., *Քննություն Ասլանբեկի բարբառի*, Վենետիկ, 1898:
12. Աճառյան Հ. *Քննություն Կիլիկիայի բարբառի*, Ե., 2003:
13. Աճառյան Հ. *Քննություն Մարաղայի բարբառի*, Ե., 1926:
14. Աճառյան Հ., *Քննություն Համշենի բարբառի*, Ե., 1947:
15. Աճառյան Հ., *Քննություն Ղարաբաղի բարբառի*, Վաղարշապատ, 1901:
16. Աճառյան Հ. *Քննություն Նոր-Նախիջևանի (Ղրիմի) բարբառի*, Ե., 1925:
17. Աճառյան Հ. *Քննությունն Նոր-Ջուղայի բարբառի*, Ե., 1940:
18. Աճառյան Հ., *Քննություն պոլսահայ բարբառի*, Ե., 1941:
19. Աճառյան Հ., *Քննություն Վանի բարբառի*, Ե., 1952:
20. Այտընյան Ա., *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի*, Երևան, 1987:

21. Անդրեասյան Տ., *Սվեդիայի բարբառը*, Ե., 1967:
22. Անթոսյան Ս., *Կեսարիայի բարբառը*, Ե., 1962:
23. Առաքելյան Վ. Դ., *Հայ գրական լեզվի և բարբառների փոխհարաբերության հարցի շուրջը*, ՊԲՀ, Ե., 1964, № 3:
24. Ասատրյան Մ., *Ուրմիայի (Խոյի) բարբառը*, Ե., 1962:
25. Բաղդասարյան Ս. Հ., *Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում*, Ե., 1973:
26. Բաղդասարյան Ս. Հ., *Մշո բարբառը*, Ե., 1958:
27. Բաղդասարյան Ռ., *Դերսիմի բարբառային քարտեզը*, Ե., 1960:
28. Բաղդամյան Ռ., *Դերսիմի բարբառը*, Ե., 1961:
29. Բաղդամյան Ռ., *Շամախիի բարբառը*, Ե., 1964:
30. Բառնասյան Ջ., *Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում*, Ե., 2009:
31. Գագանձյան Հ., *Եվրոկիո հայոց գավառաբարբառը*, Վիեննա, 1899:
32. Գասպարյան Հ., *Հաջրնի բարբառը*, Ե., 1966:
33. Գրիգորյան Ա., *Հայ բարբառագիտության դասընթաց*, Ե., 1957:
34. Դանիելյան Թ., *Մալաթիայի բարբառը*, Ե., 1967:
35. Դավթյան Կ., *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*, Ե., 1966:
36. Խաչատրյան Հ., *Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում*, Ե., 2009:
37. Կատվայան Վ., *Հայ բարբառագիտության հարցեր*, Ե., 2014:
38. Կոստանդյան Դարիկո, *Երզնկայի բարբառը*, Ե., 1979:
39. **Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ**, *Միջազգային գիտաժողով, 8-9 հոկտեմբերի, 2014*, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., 2014:
40. **Հայերենի բարբառագիտական ատլաս**: *Ուսումնասիրություններ և նյութեր*, *պրակ 1*, Ե., 1982:
41. **Հայերենի բարբառագիտական ատլաս**: *Ուսումնասիրություններ և նյութեր*, *պրակ 2*, Ե., 1985:
42. **Հայերենի բարբառագիտական ատլաս**: *Ուսումնասիրություններ և նյութեր*, *պրակ 3*, Երևան, 2010:

43. Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., 1977:
44. Հանանյան Գ., *Սվեդիայի բարբառը*, Ե., 1995:
45. Հանեյան Ա., *Տիգրանակերտի բարբառը*, Ե., 1978:
46. Ղազարյան Ս., *Հայերենի բարբառների և նրանց ծագման հարցի շուրջը*, ՊԲՀ, Ե., 1960, № 3:
47. Ղարիբյան Ա., *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953:
48. Ղարիբյան Ա., *Հայ բարբառների ծագման հարցի շուրջը*, ՊԲՀ, Ե., 1858, №3:
49. Ղարիբյան Ա., *Հայերեն բարբառների դասակարգման խնդիրը*, ԵՊՀ ԳԱ, Ե., 1941:
50. Ղարիբյան Ա. Ս., *Հայերեն բարբառների մի նոր ճյուղ*, ԵՊՀ ԳԱ, Ե., հ. 11, 1939:
51. Ղարիբյան Ա., *Հայերենի մի քանի նորահայտ բարբառներ*, ՀՊՄԻ ԳԱ, Ե., 1955, № 4:
52. Ղարիբյան Ա., *Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ*, Ե., 1958:
53. Ղարիբյան Ա., *Նյութեր հայ բարբառագիտությունից*, Ե., 1945:
54. Մադաթյան Ք., *Ալաշկերտի խոսվածքը*, Ե., 1985:
55. Մեծունց Բ., *Հայ բարբառագիտությունը 19-րդ դարում: Դասախոսություն*, Ե., 1986:
56. Միքայելյան Ժ., *Վասպուրականի շրջանի քմային ձայնավորները*, Ե., 2009:
57. Մկրտչյան Հ., *Կարնո բարբառը*, Ե., 1973:
58. Մուրադյան Հ., *Կաթավաբերդի բարբառը*, Ե., 1967:
59. Մուրադյան Հ., *Կարճևանի բարբառը*, Ե., 1960:
60. Մուրադյան Հ., *Հայոց լեզվի պատմական քերականություն*, Հնչյունաբանություն, հ. առաջին, Երևան, 1982:
61. Մուրադյան Մ., *Շատախի բարբառը*, Ե., 1962:
62. Պետոյան Վ., *Սասունի բարբառը*, Ե., 1954:
63. Պողոսյան Ա., *Հաղրութի բարբառը*, Ե., 1965:
64. Ջահուկյան Գ., *Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը*, ՊԲՀ, Ե., 1959, № 2-3:
65. Ջահուկյան Գ., *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972:

66. **Ջահուկյան Գ.**, *Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցերը*,
Երևան-Բեյրութ, 2000:
67. **Ջահուկյանական ընթերցումներ**, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Ե., 2006-2014:
68. **Սևակ Գ.**, *Հայոց բարբառների ծագման հարցի շուրջը*, ՊԲՀ, Ե., 1959, № 1:
69. **Վարդանյան Ա.**, *Վայոց Ձորի միջբարբառը*, Ե., 2004:
70. **Տեր-Պողոսյան Գ.**, *Հավարիկի բարբառը*, ԲՀԳԻ, Ե., 1921-1922:

ՎԵՐՁԱԲԱՆ

Դասընթացի շրջանակներում ուսանողները յուրացնում են նաև դաշտային աշխատանքներ կատարելու, բարբառներ հավաքելու, բարբառախոս ինֆորմանտների (տեղեկատու) հետ աշխատելու հմտությունները, ինչպես նաև՝ հավաքած բարբառայուրթը դասակարգելու և ուսումնասիրելու սկզբունքներն ու օրինաչափությունները: Ինչպես նաև դրվում լեզվական հատկանիշները և կոնցեպտները (լեզվական ընտրանք): Այդ հատկանիշների և կոնցեպտների ձայնագրումը և գրանցումը ամբողջական է դարձնում հայերենի բարբառների նկարագիրը: Որպես նմուշ-օրինակ՝ բերվում է «Հայերենի բարբառագիտական ատլասի» (ՀԲԱ) ծրագրով (1977 թ.) մշակված նյութը:

ՀԲԱ-ն պարունակում է շուրջ ութ հարյուր լեզվական հատկանիշ ու կոնցեպտ, որոնցից հինգ հարյուրը բառային են, իսկ երեք հարյուրը՝ հնչյունական և քերականական: Դասընթացի շրջանակներում ուսանողներն ստանում են գործնական առաջադրանքներ՝ իրենց քաղաքային ու գյուղական համայնքներում ապրող տարբեր տարիքի բարբառախոսների հետ կատարելով հետազոտական, բանահավաքչական ինքնուրույն աշխատանքներ ու լսաձայնագրումներ: Հավաքագրած նյութի բովանդակությունը բազմաժանր է. գրառումները և ձայնագրություններն արտացոլում են ժողովրդական բառուբանը, հեքիաթները, երգերն ու ասույթները, իսկ ՀԲԱ-ի ծրագրով գրանցվում են ընտրված լեզվական հատկանիշները:

Դասընթացի հիմնախնդիրների ներկայացման շնորհիվ տեսանելի են դառնում նաև կրթական այն արդյունքները, որոնց իմացությունը համարվում է կարևոր և պարտադիր: Ըստ այդմ՝ դասընթացի հաջող ավարտին ուսանողները՝

- ա)** *կիմանան հայերենի բարբառների դասակարգման ու ծագման վերաբերյալ եղած տեսությունները, հայ բարբառագիտության պատմության զարգացման փուլերը,*
- բ)** *կյուրացնեն հայերենի բարբառների հնչյունական, բառային և քերականական հատկանիշները,*
- գ)** *կկարողանան իրարից տարբերել բարբառները, ենթաբարբառը, խոսվածքը և բարբառագիտության մեջ կիրառվող այլ եզրույթների նշանակություններն ու նրանց առանձնահատկությունները:*

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՀԳԻ-Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի

ԳԱՏ- Տեղեկագիր հասարակական գիտություններ

դ.-դար

Ե.-Երևան

թ. -թվական

հ.-հատոր

ՀԲԱ-հայերենի բարբառագիտական ատլաս

ՀՊՄԻ-Հայաստանի պետական մանկավարժական ինստիտուտ

հ.-ե.-հնդեվրոպական

ՊԲՀ-պատմաբանասիրական հանդես

Ք. ա.-Քրիստոսից առաջ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
(Դասախոսություններ)

GARIK MKRTCHYAN

BASES OF DIALECTOLOGY
(Lectures)

Ստորագրված է տպագրության 16.03.2015:

Թուղթը օֆսեր N 1: Տպագրությունը օֆսեր:

Տպաքանակը՝ 150:

Դաստ Պրինտ հրատ.

ԵՐԵՎԱՆ-2015